

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԱՑՈՂ ԴԱՐԸ

Տասնևիններորդ դարը, որուն հետ մեծցանք, կը վերջանայ, պատմական իմաստասիրութեան բազմաբնույթ նիւթեր արձանագրելով Հայ ազգին տարեգրութեանը մէջ:

Մեր էինք դարձաւ ձկնիկը, ո՛ր հասանք, ո՛ր կը դիմենք: Այս հարցումները կը գրաւեն ամէն խորհող հայու միտքը այն պահուն երբ ըրիտօտնեայ ժողովուրդները կեանքի նոր թուական մը կը սկսին:

Գլուխնիս ծանրածանր մտատանջութեանց ներքեւ վայրահակ, այնպէս կը դիտենք անձանթ ապագան: Տասնևիններորդ դարը իբր աւետարտ թուական մը կը սկսէր մեզի համար. ու որքան կը յառաջանար, հետըզհետէ մեզի աւելի եւ աւելի ակնկալութեանց իրաւունքներ կը պարզէր, երբ յանկարծ մենք զմեզ գտանք մեր ազգային գոյութեանը սպասանացող շատ ծանր վտանգներու հանդէպ: Մեր ինքնապաշտպանութեանը համար դարերու շրջանին մէջ թերեւ երբեք չըլաւիտութեան, ինքնամփոփ ողբի եւ հողեկան կորույթ այնքան պէտք ունեցած չենք որքան ունինք յի՞մ դարը վերջացած պահուն:

Տասնութերորդ դարու վախճանին հայ ազգը իսլամ երկու պետութիւններու կը հպատակէր, տասնևիններորդ դարը անոնց թիւին վրայ հատ մըն ալ աւելցուց: Ռուսը 1801ին մեր երկրէն դեռ հեռու էր, բայց մեր հայրերը իրենց աչքերը խաչապաշտ թագաւորին վրայ կը յառնէին, իբր փրկիչ: Ռուսը 1900ին արդէն Հայաստանի կարեւոր մէկ մասին տէրն է եղած, ու ամբողջին զբաւմանը կ'ըղձայ. իսկ մենք ահաբեկութեամբ կը դիմենք խաչապաշտ թագաւորին յառաջնորդը:

Հայաստանի այն մասը զոր Ռուսիա Պարսկաստանէն խլեց, շարունակ կէս դար նիւթական բարգաւաճման, մտաւորական զարգացման, ազգային զգացումի հզօրացման ամէն զիւրութիւն վայելեց: Այլեքսանտր Բիմազէն յետոյ ունեւ ազգայնամոլական քաղաքականութիւնը

տիրելով, Ռուսիոյ հայերը եթէ իրենց տնտեսական կեանքին մէջ դեռ չտարեցան, բայց իրենց ազգային կեանքին մէջ ահեղապէս դժբաղդ են:

Պարսկաստանի Հայութիւնը շատ տկարացաւ Երեւանեան նահանգին ուսուցմամբ: Վերջին երեք քառորդ դարու մէջ Պարսկաստանի հայերը զգալապէս ո՛չ յառաջդիմեցին, ո՛չ ալ յետադիմեցին, զրկուած ըլլալով այն պայմաններէն որոնք ժողովրդի մը մտաւորական վիճակին փոփոխմանը կը նպաստեն: Հայերը Պարսկաստանի մէջ օակաւաթիւ մնալով, ազգային ինքնավար կեանքի ո՛ր եւ է ձգտում չունին, ուստի եւ Պարսիկ կառավարութեան հետ ընդհարումի ո՛ր եւ է պատճառ մը չներկայացաւ: Հայերը Պարսկաստանի մէջ այնքան հանգիստ կ'ապրին որքան ապրիլ հնար է Արեւելի իսլամ պետութեան մը մէջ: Հայ ազգին մտաւորական ընդհանուր ժառանգութեանը վրայ իրենք իրենց միջոցներով բան մը աւելցնելու անկարելիութեան մէջ կը գտնուին: Պարսկահայ գրական տաղանդները Ռուսիոյ Հայոց միջոցաւ երեւան եկած են:

Հայութիւնը թիւրքիոյ մէջ շարունակեց ապրիլ բազմադարեան այն պատմական կեանքովը որ մեր բաժինը եղած է, իսլամներուն Հայաստան արշաւելէն ի վեր: Միշտ նիւթական ահեղ տառապանքներով ասանջեցանք, բայց միշտ ալ վերընձիւղման եւ ուժեղացման հաւատքը պահեցինք: Ենտրհիւ մեր և մեր վրայ տիրապետող ցեղին միջեւ կործնիչ եւ քաղաքակրթութեան հիմնական տարբերութեանց, մենք որքան որ ջախջախուած ըլլանք, սակայն մեր ազգայնութիւնը կը մնայ անկորուստ: Թիւրքիոյ Հայերը կարող չեն իրենց բարոյական և տնտեսական կեանքերը իրարմէ անջատել: Մինչ Ռուսիոյ Հայոց համար հնարաւոր է իբր հայ մարդ փճանալ, բայց տնտեսապէս բարգաւաճելով սքանչելապէս ապրիլ իբր ուսմարդ մեզի՝ թիւրքիոյ Հայոց համար՝ մտնարին է իբր հայ մարդ մեռնիլ և իբր թիւրք մարդ ապրիլ: Մեր նիւթական բարգաւաճմանը կամ ոչնչացմանը հետ մեր հայ ազգայնութիւնն ալ կամ պիտի փրկուի կամ սլիտ ու չընչանայ: Այս ճշմարտութիւնը աղէկ հասկցած ըլլալով է որ մինչ թիւրքիա գրեթէ կատարեալ ինքնավարութիւն կը վայելէինք մեր ազգային կեանքին մէջ, ըմշրոնեցինք թէ նոյն պատմութիւնը մեր ազգայնութեան

պահպանումին համար երաշխաւորութիւն մը չէ, երբ Հայաստան անդին տնտեսապէս կը փճանայ, հետեւաբար Հայաստանի նիւթական վիճակին բարեփոխման պէտքը հայ ազգին պահպանմանը կամ ոչնչացմանը խնդիրը դարձաւ:

Հայ ժողովուրդը հինգ դար սակայն թիւրքերու տիրապետութեան ներքեւնուածուած մնալով անշուղի, այլ ևս քրիստոնեայ թիւրքեր կը համարուէին Եւրոպայի աչքին: Արեւելեան խնդիրը որ դարուս սկիզբը ուժգնապէս կը բացուէր, եւրոպական թիւրքերի քրիստոնէից ազատագրութիւնը իրեն կէտ նպատակի առաջադրած էր: Ասիական թիւրքերի քրիստոնէից խնդիր մը ստեղծուած չէր, երբ 1870ին Կ. Պոլսոյ Պատրիարքարանէն Հայկական հարցի մը սկզբնաւորութիւնը տեսնուեցաւ. քանի մը տարի վերջ, 1878ին, այդ սկզբնաւորութիւնը, Հայաստանի բարենորոգումներու խնդիրը, եւրոպական դահլիճներու առջեւ հայկական հարցի մը վերածուած էր Սան-Սթեֆանոյի և Պերլինի դաշնագրներովը:

Հայկական խնդրին մարմնաւորեցումը Հայ ազգը նմանած էր գետի մը որ օրին մէկը յանկարծ կը փոխէ այն դարաւոր յատակը ընդ որ կ'ընթանար դարերէի վեր: Համակերպութեան, համբերութեան, սիրաշահութեան քաղաքականութեամբ հայը քիչ թէ շատ ապրած էր թիւրք իշխանութեան հետ, եւ իրեն համար ստեղծուած էր «Հաւատարիմ Հայոց Ազգ» տիտղոս մը, որ թիւրքերուն աչքին յարգի եղած էր, նամանաւանդ եւրոպական թիւրքերի քրիստոնէից ապօրոգութեան թուականէն ի վեր: Բայց Դուռը երբեք չէր ուզած Հայաստանի համար քիչ շատ բարեկարգ վիճակ մը ստեղծելով օգտուիլ հայ ժողովրդին քաղաքականութենէն: Հայաստանի հարստահարութեանց քննիչ Յանձնաժողովներու 1870-76 տեղեկագիրները հաւատեցին թէ օսմանեան իշխանութիւնը Հայ ազգին «հաւատարմութիւնը» անոր տկարութեանը անխուսափելի եւ բնական հետեւանքը համարելով, չէր սւզած ո՛ր եւ կ'արեւորութիւն ընծայել Հայոց քաղաքական տրամադրութիւններուն: Դուռը իր ապահովութեանը համար օգտակար համարած էր շարունակել վարչական այն ճնշող, հարստահարիչ դրութիւնը որ պարտաւորած էր Հայ ազգը հաւատարիմ մնալ թրքական տիրապետութեան:

Հաւատարմական քաղաքականութիւնը շօշափելի ո՛ր եւ էօքուս մը չէր պարգեւած հայ ժողովրդին: Ընդհակառակը քաջալերանք մը եղած էր Դրան իր վարչական գրութիւնը անփոփոխ պահելու. գեաը իր յատակէն խուսափելու անյիմարելի ուժի մը առջեւ գտնուեցաւ: Խրիմեան պատրիարք նոր ճամբան յատակագծեց, Ներսէս պատրիարք՝ շուրջ դարձնելու գործը սկսաւ:

Հայ ազգին համար 1878ին բացուեցաւ նոր կեանքի մը թուականը, սրուն առաջին շրջանը իսկ զեռ չէ բուրուած: Այդ կեանքը զեռ կը շարունակուի, եւ ապագան անծանօթ է: ԺԹ գարը իին կը փոխանցէ Հայաս-

տանի փրկութեան գատր: Պատմական գնահատումը մեզի յաջորդող սերունդներուն աշխատութիւնը պիտի ըլլայ: Արդի սերունդը կը գործէ, եւ ինքը չէ որ իր պատմութիւնը պիտի գրէ հանդարտ մտքով, եւ անաչառ քննադատութեամբ: Եւ ո՛վ կրնայ քննադատել կամ դրուատել պատմական ժամանակամիջոց մը, երբ վերջակէտը անոր առջեւ դրուած չէ:

ԺԹ գարը Հայաստանի վրայ յառաջիմական զգալի ներգործութիւն չունեցաւ: Թրքական վարչութիւնը մեր երկիրը այն նահապետական վիճակին մէջ պահեց ուր կը գտնուէին աշխարհիս բոլոր երկիրները շոգիին ու ելեկտրականութեան գիւտէն քուտի: Վանի ծովուն վրայ նաւարկութիւնը այսօր կը կատարուի այն միևնոյն միջոցներով որոնք Հայկին ատենները սովորական էին: Հայաստանէն մինչեւ Սեւ ծով ճամբորդութիւնները զեռ կարտանով տեղի կ'ունենան: Ճարտարագործութիւնը մեր երկիրը մուտք չի գտաւ. երկրագործութիւնը նախապատմական դրութեան մէջ մնաց: Հայաստան իր պատմական կեանքին շատ տխուր, գուցէ էն տխուր եղանակը ունեցաւ այս դարուս վերջի կիսուն: Դարուս սկիզբը իր ընկերական եւ տնտեսական կազմակերպութիւնները զգալի տարբերութիւն չունէին ուրիշ երկիրներու կազմակերպութիւններէն. իսկ հիմակ կղզիացեալ կը մնայ հիմնապէս փոփոխուած աշխարհի մը մէջ:

Հայաստան գրկուած մնաց նաև մտաւոր զարգացման առաւելութիւններէն: Կարգալ դիտողներու թիւը թէև շատցաւ յարաճուն դպրոցներու շնորհիւ, բայց թիւրք իշխանութիւնը արգիլած ըլլալով հայ երկրին մէջ տպարանի հաստատութիւն և մամուլի հիմնարկութիւն, հայ միտքը իր հողին վրայ չկարողացաւ բարգաւաճիլ: Վարագի տըպարանը փորձ մըն էր որ անկարողութեան գատապարտուեցաւ:

Օտար երկիրներու հայերը հայթայթեցին Հայաստանի մտաւորական պէտքերը: Արտասահմանի հայ վանքերը բազմաթիւ գրքեր տուին ամբողջ հայ աշխարհին. բայց անոնք իբր մասնագիտական գործեր շատ օգտակար եղան ամբողջ Հայութեան, մեծապէս նպաստելով մեր լեզուին մշակման, և ճոխացուցին մեր պատմական հրմտութիւնը, բայց հայ մտքին վրայ ներգործելու սահմանուած չէին:

Արտասահմանի Հայութիւնը տպարանի հաստատութեան արտօնութիւնը վայելելով, տոհմային նոր գրականութիւն մը ստեղծելու դիւրութիւնը ունէր. ինքն էր նաև որ դաստիարակ պիտի ըլլար Մայր-Հայրենիքին: Թիւրքերի մէջ Պոլսոյ եւ Իզմիրի գրողները իրենց հեղինակութիւններով սե թարգմանութիւններովը սկսան ներգործել Հայաստանի և ամբողջ Հայութեան վրայ: Բայց թարգմանութեանց մէջ շատ քիչ գործ կայ որ գաղափարային գրականութիւն համարուի, և մարդկային ընդհանուր մեծ մատենագրութեան մաս կազմէ: Իսկ հեղինա-

կուրծիւններն ալ չեն հանգչիր այն Հաստատ, ամուր հիւ-
մերուն վրայ զոր անցեալ ունեցող ազգ մը կը պարգեկ
իր գրագէտներուն: Կ. Պոլսոյ զրոզները հազիւ թէ փկած
էին օթափիլ և հայկական կեանքի անուշափրութեամբ
գրականութիւն մը ստեղծելու հետամտիլ, երբ Թիւր-
քիոյ տարապայման խստութիւնները խափանեցին ամէն
խորհուրդ:

Ռուսիոյ մէջ Թիֆլիս, իբր շարունակութիւն Արա-
բատեան նահանգին, Կ. Պոլսէն առելի նպաստաւոր պայ-
մաններու մէջ կը գտնուէր տուժալիս գրականութեան
մը ստեղծմանը համար: Եւ արդարեւ հայ ազգին քաղա-
քական, ընտանեկան, կրօնական-կեանքն է որ Արարատ
Կովկասի զրականութեան կը հայթայթէ իր կառուցման
բոլոր նիւթերը: Վէպ, թատերգութիւն, բանաստեղծու-
թիւն Արուեստի ինչ թերութիւններով ալ ներկայանան
զեռ, բայց եւ այնպէսլը տեսնենք որ եւրոպական ամէնազ-
գերու գրական զարգացման ուղիէն կը յառաջանան:
Այդ մատենագրութիւնը քաղաքական խոչնդոտներու պատ-
ճառաւ չի կրցաւ Թիւրքիոյ Հայաստանը թափանցել:
Բաֆֆիի վէպերէն զատ ուսաճպատակ Հայոց ուրիշ օ և է
գործը տարածուած չէ մեր մէջ:

Քրիստոնէական տարբեր գաւանանքներ քաղաքական
պաշտպանութեանց հովանաւորութեամբ փորձեցին օրփ-
ուել Հայաստան, բայց ժողովրդային կոյտին վրայ զգալի
ազդեցութիւն չունեցան: Կաթողիկոսութիւնը հրապուրիչ
ոեկ նոր գաղափար չէր բերեր հետը. ժողովրդին միտքը
անմատչելի կը մնար ուսուցածաբանական նրբութեանց:
Քողոքականութիւնը, իբր Աւետարանական պարզ եկեղե-
ցի, չէր կրնար զոհացնել այն բոլոր հոգեկան, մտա-
ւորական, և մանաւանդ մարմնական պահանջումները զոր
հայը՝ իր ամբողջութեանը մէջ տգէտ՝ իր կրօնքներէն
ակնկալած է նախապատմական ժամանակներէ ի վեր,
ուստի եւ Աւետարանական Եկեղեցին սահմանափակ
թուով հետեւորդներ ունեցաւ: Վերջին տարիներս ազգա-
յին զգացման հզօրացմամբ, նոյն իսկ իրենք Կաթողիկ և
Աւետարանական Հայերը ուզեցին որ իրենց հոգեւոր ա-
ռաջնորդները ուժգնապէս չհետամտին կրօնական տա-
րածումներու, որոնք ազգին մէջ գծտութեանց ու երկպա-
ռակութեանց պատճառ կ'ըլլան:

Հայաստանի ԺԹ դարու պատմութիւնը կը փակուի
Լէնկիթիմուրի եւ Ճէնկիզ խանի ժամանակներուն վերա-
կենդանացմամբ: Անգէն ժողովուրդ մը կոտորելու ո-
ճիւրը նորերևոյթ զրուագ մը չէ Թիւրքիոյ պատմութեան
մէջ: Օսմանեան իշխանութիւնը, իբր տկար կառավարու-
թիւն, իր ապահովութիւնը վատութեան խնդրեց, բայց
արդիւնքը իր առաջադրութեանց չհամապատասխանեց:
Հայաստանի ապագային խնդիրը չխղղուեցաւ: Հայոց ա-
րեւնին մէջ, Կոստորածները Համ-հայութեան գաղափա-
րը քօրացուցին, և ընդհանուր Հայոց միջև Ազգային Հա-

մերաշխուխիւնը հիմնեցին:

Կը հասնինք ուրեմն 19րդ դարուն վերջին ամի-
սը, այբերնուս առջեւ ունենալով մեր վիճակին հետևե-
ալ պատկերը:

Պարսկաստանի մէջ Հայութիւնը Երևանեան նահան-
գին ուսացմամբ քաղաքականապէս տկարացած է, բայց
Պարսկաստան ապրող Հայոց վիճակը ոչ զէպի լաւը,
ոչ զէպի վատը զգալի փոփոխութիւն մը կրած է: Հայ-
կական ապագայի մը խորհուրդը ոչ ոք կը մտաբերէ Պարս-
կաստանի Հայոց համար:

Ռուսիոյ մէջ Հայութիւնը տնտեսապէս բարգաւաճ
է: Այն ամէն զիւրութիւններովը զոր հայ ազգը ուսա-
կան տիրապետութեան ներքև կէս դար անարգել վայե-
լեց, կարող եղաւ իրեն բարոյական և մտաւորական
զարգացման ամուր կտուան մը պատրաստել: Ռուսիոյ
վերջին տասնհինգ տարիներու ազգամուլ քաղաքակա-
նութիւնը ահեղապէս կոռուելով հայ ազգայնութեան զէմ,
մեծ վտանգ մը կ'օպահանայ Ռուսիոյ Հայոց «իբր հայ»
ապագային:

Թիւրքիոյ Հայութիւնը իր նիւթական կեանքին մէջ
թշուառ է, եւ աղքատ՝ իր մտաւորական կեանքին մէջ:
բայց իբր մարդ՝ լաւագոյն ապագայի մը տիրանալու, եւ
իբր հայ՝ իր ազգայնութիւնը անվթար պահպանելու պայ-
մաններով շրջապատուած:

Հայը ԺԹ դարը կը մտնէր իբր զուտ կրօնական ժո-
ղովուրդ մը, նոյն իսկ իր ներքին համոզմամբ: Դարը կը
վերջանայ եւ հայը այն խորին համոզումը ունի թէ
քաղաքական ազգ մը ըլլալու իրաւունքը կը վայելէ:

Սրտագեղ մնաս բարով մը կ'ըսենք ԺԹ դարուն,
վասն զի Հայոց համար Գաղափարի մը Ֆառանգութիւնը
կը թողու ի դարուն:

Հիմակ մեզի կը մնայ որ այդ Գաղափարը իբր մարմ-
նացեալ իրականութիւն ի՞նչ դարուն փոխանցուի:

Այնտարինք:

ԱՆԵՐԵՒՈՅԹԱՑԵԱԼՆԵՐԸ

Պողոս Եաշեանի մահուան լուրը վերջերս քան մը տողով հրատարակուած տեճնելու, իրաւունք տուի անոնց որ բարեբաօտ կը համարին հանրային կեանքի մարդ մը երբ անիկայ իրեն նագատաւոր ժամանակի մը մէջ մեռնիլ կը զիտնայ: Թո՛ղ Եաշեան քօան տարի առաջ գերեզման երթար, և իր մահը ազգային վիշտ մը պիտի հոչակէինք: Ատենազպիրն էր այն « Հայաստանի Սօվեյոց Յանձնաժողով » պաշտօնական անունը կրող մարմինն որ հայ հայրենիքին աղէտներուն պատմութեանը մէջ Բարեբարի մը յիշատակը արձանագրեալ թողուց:

Լոկ պատուակալ տիտղոս մը չէր Ատենազպիրն պաշտօնը, այլ ծանր աշխատութեանց պարտականութիւն մը կը բերէր հետը: Եաշեան զրեթէ ամէն օր շրջաբերական կը տեղար աշխարհիօ չորս ծագը գտնուող Հայոց: Հնաօէր մը եթէ այդ « առաքելական թուղթերը » հաւաքելով հատօր մը տպէ, հիմակուան սերունդը աշխարհաբարին Դաւիթ Անյազթը պիտի հոչակէ անոնց խմբագիրը: Ամէն անգամ օր Մասիս այդ շրջաբերականները կը հրատարակէր, կը պարտաւորուէի միտքօ շարժելի օրպէս զի Եաշեանի գրութեանց եթէ ոչ խօրը գօնէ մակերեւոյթը թափանցել կարողանայի: Այդ օրտաշունչ տողերը օակայն կրօնական բանաստեղծութեան մը « Խորհուրդ խորին » ի մը օրքութեամբը կը յուզէին ծողովուրդը, որ միշտ գերագոյն զօրութեան մը ներշնչուած կը համարէ ինչ որ զիւրամատչելի չէ իր ուղեղին:

Հայասիրութեան ու մարդասիրութեան ուղղուած այդ հրաւերները խրթին էին, այո՛, բայց կը զգայինք թէ օրբազան Աիւնը կը շրջագայէր անոնց մէջ: Յուրտ օրտով մարդը չէր Եաշեան, բանաստեղծի ու արուեստագէտի երկնատուր կայծովը ծնած էր: Իր ոտանաւորները, որոնց ձեռագիրները օր մը կը կարգար մեզի, շերմութեան գօլով մը օրտերնիօ կը տաքցնէին: Ափի մը մեծութեամբ իւղանկարները օրոնք ինք կը նկարէր, զգացեալ հօգիի մը արտօմութիւնը ցուացնելով, մեզի երկարատեն իրենց առջեւ կը պահէին:

Բանաստեղծական խանդով մշտաբորբօք այդ հայը պատաւօր մըն էր, Պոլսոյ վճռաբեկ Ատենին անդամ: Խորիտ, ուղղամիտ, անկաշառ, Եաշեան Պողոս տարօրինակ երեւօմ մըն էր թրքական միջավայրին մէջ: Արգարադատ գատաւորին տեղը չէ թիւրք գատարանը. ճամբօւեցաւ հանգստեան թոշակով:

Ու անհանգիստ կը մնար լափիչ գործունէութեան տենչով վարակեալ այդ հայը: Վերջի տարիները երբեմն

իրեն կը հանգիպէի Պոլիս, Թաքօրմէն Եիչլի տանօղ երկայն ճամբուն վրայ: Կը քալէր օրգապանձ, հովուն մուած վեհափառ յօրուքը որ պիտի կրնար Հայր Ատուածոյնկարչի մը իբր օրինակ ծառայել:

Երբ այդ պատկառազդեցիկ գէմքը կը զիտէի, ինծի այնպէս կը թուէր թէ Եաշեան կեանքի իրականութիւններէն անշաուած, երջանիկ կ'ապրէր մտացածին աշխարհի մը մէջ: Օրին մէկն ալ իրենները զինքը առողջատուն մը տարին հանգչելու: Մարմինը թերևս հանգչէր բայց երեւակայութիւնը կը շարունակէր գերերջանկութեան մթնոլորտի մը մէջ թափառայած յոգնիլ:

Երջանիկ մեռաւ Եաշեան: Բնութեան մարդուս պարգեւած էն մեծ բարիքներէն մէկը լաւատեօ երևակայութիւնն է թերևս: Կրօնքներու հանգրձեալ կեանքի մը Արքայութիւնը ո՛վ զիտէ թէ գեղածիծաղ պատկերներու մէջ ապրող երևակայութիւնը չէ պարգապէս:



Տիկին Ալվազեանի մահուան լուրն ալ կը հասնի Պօլէն: Չեմ կարծեր թէ այդ անունը մեր հանրութեան օրտին մէջ յիշատակ մը արթնցնէ, բայց տրտմութեան զգացումով համակեցան ամէն անոնք որ այդ « իբր հայ եղական » կինը ճանչցան: Գեղարուեստը սիրեց, գեղարուեստին համար ապրեցաւ Տիկին Ալվազեան, ինչ որ հայ ժողովրդին մէջ օովօրական բան մը չէ: Բնութիւնը զինքը օծտած էր ոչ հասարակ ձայնով մը, զոր Արուեստին օրէնքներովը մտատիպար կատարելագործութեան բարձրացնել կը տենչար: Գնաց Բարեզ ուր իր բոլոր հանգրստութիւնը գոհեց մեծ երգիչ մը ըլլալու ըզձանքին: Հայ կին, ունենալով ինչ որ « ընկերական զիրք » կը կոչուի, Տիկին Ալվազեան չքաշուեցաւ Պօլիս իոկ բեմը ելլել: Բայց սիրած թատրօնը իր օրա՛ն էր, ուր շատ անգամ առանձինն, երբեմն ալ բարեկամներով շրջապատուած, կը սլանար, կը թոչէր իտէական վիշտերու, իտէական ուրախութեանց երկինք մը:

Չեմ մօտար Պօյաճի-գեղի այն բանաստեղծական օենեակը, ուր տասնըհինգ տարի առաջ Տիկին Ալվազեանի այցելելու բաղղաւորութիւնը ունեցայ բարեկամի մը ընկերակցութեամբ: Բլրան մը գագաթն էր այդ օենեակը, պարտէղի մը մէջ: Երկու դարաւօր կաղնի պատուհաններուն առջեւ, իրիկնամուտի պատրանքը կուտային: Անոնց թաւ օտտերուն մէջէն ծովը բեկեկեկալ, կտոր կտոր եղած կ'ընգնշմարուէր: Սենեակը իր արգուզարդերովը մթնշաղի հեշտութեամբ կ'ողողէր օրտերը: Ինծի այնպէս թուեցաւ թէ միջնադարեան Մայր-Եկեղեցիի մը խօրհրդաւօր մատրան մը մէջ կը գտնուիմ: Երբ տան տիրուհին ձեռք կարկառեց մեզի, չի փօրձուեցայ անգամ մը ինքնիրենս հարցնել « զե՛ս թէ հրեշտակ »: Այդ լուտաշող աչքերուն մէջ բարութիւն կը ցօլաւը: Գափ-

կարտութեան օթեւանն էին անոնք։ Անկեղծ, եղբայրակցական բարեկամութեան մը հրաւերը կը մեկնէր այդ աչքերէն։

Խօսակցութիւնը շուտով դարձուց հայ զրականութեան շուրջը։ Ու անդրադարձալ թէ հետամտած էր եւ ընտանեցած գրական այն նոր շարժումին որ երկու երեք տարիէ ի վեր Պոլիս երևան գալստեամբ էր։ Նշրածիլ գրողները իրեն արդէն ծանօթ էին, ու գեղեցիկօտերի մը ճաշակովը կը գնահատէր զանոնք։

Քիչ ետքը տան տիկնոջ փափկանկատութեամբ նախ մենէ ապահովութիւն ստանալով թէ կրնայինք հաճոյք զգալ ի լուր իր ձայնին, անցաւ դաշնակին առջեւ ու հեռագհետէ նուագեց եւ երգեց հունգարական ցատկըրտող քայլերգ մը, ֆրանսական քաղցրանոյշ հովուերգութիւն մը, իտալական սարսուղիցի կ' մահերգ մը։ Տարիներ ետքը երեքշաբթի օրերը, երբ Տիկին Այվազեան իր օտարական ընդունելութիւնները կ'ընէր, իրիկունները երեքն երեքն Հայրենիքի խմբագրատունէն խոյս առլով, քայլածուր կ'երթայի Բերա, հանրային կեանքի մաքառումներէն պահ մը հանգստանալու համար սիրտ հանդարտեցնող նուագով մը, զոր շնորհալի տիկինը իր բարեկամներուն համար ինք գիտէր այլ եւս ընտրել առանց հարցնելու։

Օր մըն ալ փոթորիկը ցիրուցան ըրաւ մեզի ամէնքս։ Բայց մեր սրտերը ձայնագրի մը պէս անեղծ կը պահեն ուրախութեան եւ տրտմութեան օրերու մէջ իրենց վրայ զարնուած ձայնի թրթուռները։ Ու կան ժամեր՝

...ոտր հոգին ի տեկնչ
Յիշատակաց իտր կարօտի։

Եւ սիրտը ինքնաւար կ'օկոսի մընջել։

Ու այդ կինը որուն ամբողջ էութիւնը ձայնն էր, կը մեռնի խոր լուութեան մէջ։ Հագիւ թէ Պոլսոյ օրաթերթերէն մէկը անոր մահուանը լուրը երկտողով մը կը հաղորդէ։ Կին մը կը գտնուի միայն որ տրտմութիւն զգացող կողքայ Արուեստագիտուհին, ու իմաստասերի մըտքով անոր պատկերը կը նկարէ եւ կ'ըսէ։

«Կին մըն էր որ անմեռուի մը կեանքը ունենալ կը բաղձար, որ չէր ուզէր աննշան հանգրուանի մը վրայ կանգ առնել, որ կը սիրէր օրուան խօսակցութեան առարկան զանաւ միշտ, կին մը վերջապէս՝ որուն համար մոռացութեան մէջ մնալը պարզապէս մահ մը պիտի ըլլար, ամէնէն անագորոյնը, ամէնէն գառնը ու ցաւագինը մահերուն։ այն հոգեվարքի վիճակներէն մէկը՝ որուն մէջ մարդ կը տանջուի, որուն մէջ մարդ կը բզբտուի առանց անկէ ազատիլ կարենալու։ Որչափ ատեն որ ապրեցաւ, որչափ ատեն որ արևը ծծեց, իթէ երբեք այդ հաշակի կեանքին տիրացած ըլլալու երջանկութիւնը չի վայելեց, զօնէ օտ միսթարանքով անցուց իր օրերը իթէ այդ նպատակին հասնելու կ'աշխատէր անգուլ կեանքով

մը, անընկճելի եռանդով մը և հզօր ճիգերով։ Այդ յարատեւ աշխատանքը ոչ մէկ սպաննիչ, ոչ մէկ սպառիչ, ոչ մէկ յոգնեցնող հանգամանք կրնար ունենալ իրեն համար։ Ընդհակառակը անոր մէջ կը գտնէր ամենէն անուշ մոռացումներէն մէկը, մոռացումը այն երջանկութեան որ իրմէ խոյս կուտար, եւ օրուն խուսափիլը, փախչիլը չէր զգար անոր հասնելու համար թափած աշխատանքին մէջ։ Բայց ինչ օգուտ այդ տատանքը. այդչափ յոգնութիւն, այդչափ հեքոտ աշխատութիւն եւ այդչափ հետապնդում ինչի կը յանդին այսօր։ Մոռացումը, ահաւոր, անկարեկիր մոռացումը զինքը կը զրկէ նոյնիակ մահուանը առաջին օրէն, տակաւին գերեզման չմտած, տակաւին չբորբոսած. ու վաղը երբ ալ փոշիի վերածուած ըլլայ, պիտի գտնուի՝ արդեօք ընտանիքէն դուրս եղող մէկը՝ որ իր անունը յիշէ։»

Մերսետէս կը սխալի։ Քանի մը օր առաջ Բարիկ կը գտնուէի. մենք զրական հին բարեկամներս իրար գտած էինք։ Ամէնքս ալ տխրութեամբ համակուեցանք լռելով տարաբաղդիկ արուեստասէրին մահուան լուրը։

Օրուան տագնապներուն մէջ, նիւթականին ճնշող տիրապետութեանը ներքեւ Պոլիս գուցէ շուտ կը մոռնայ իր մեռնողները։ Եւ ո՞վ զիտէ թէ ապրողները երանի չեն իտար անոնց որ կը մեռնին, ինչպէս Հայաստան զեռ ապրող հայերը բարեբաղդ կը համարին անոնք որ կուտուեցան, լմեցան։



Ժամանակակից Հայոց համար անծանօթի մը՝ Սարգիս Համամճեանի՝ մահուան լուրը կ'առնենք։ Դրան ծառայութեանը մէջ գտնուող հին պաշտօնատար մըն էր որ ատենէ մը ի վեր է կառավարութեան ներկայացուցիչն էր ծխախոտի Բէթիին քով։

Հին ժամանակները, քսան տարիի մը չափ կայ, Պոլսոյ հայութիւնը օր մը յանկարծ Սարգիս Համամճեանի թշնամացաւ։ Պատմութիւն մը՝ առատ պիլ մը, բերնէ բերան կը շրջագայէր։ Տատեան Ներսէս Պատրիարքին նա՝ մակ մը զրած է եղեր, նտխարարներու ժողովքին մէջ հայկական խնդրի մասին տրուած գաղտնի որոշում մը ծանուցանող։ Պատրիարքը այդ նամակը կը յանձնէ հայ վաճառականի մը որ զայն կը փոխանցէ Սարգիս Համամճեանի։ Այս հաւատարիմ պաշտօնեան ալ գաղտնի թուղթը շիփ շիտակ սուլթանին ոտքերուն ներքեւ կը գնէ։ Սուլթանը կը կանչէ Տատեանը եւ նամակը ցոյց տալով կ'ուզէ զիտնալ թէ անոր ձեռագրերն է։ Տատեան չուրանար, բայց սուլթանին ոտքերը իյնալով ներողութիւն կը խնդրէ։ Այդ միջոցին Մահմուտ Նէտիմ փաշան ալ կը հասնի, և կը բարեխօսէ ի նպատակ Սարգիս պէտի։

Այս առատ պիլը ամէն հայու արիւնը զուխը ցատկեցուց։ Ու գիտենք թէ երբ արիւնը զուխը կը խուժէ,

ուղիղ բանականութիւնը կը խուսէ հոնկէ: Դրան ծառայութեան մէջ գտնուողներուն նախանձոտ մրցումները, ազգային կեանքի հետ առանց ո եւ է վերաբերութեան, Տատեանին թելադրած էին ստորնութիւն մը, որմէն իր հակառակորդին վարկաբեկում կը յուսար, և իրեն՝ ժողովրդականութիւն: Հայկական խնդրին փառաւոր թուականներն էին. Տատեան Արթին թեկնածու մըն էր կուսակալութեան, ուր հասնելու համար ազգային համակարանքին պէտքը կը զգար:

Համամեծանի մահուան լուրը երբ կ'առնեմ, յիշողութեանս մէջ չեմ գտներ ստոյգ իրողութեան մը ո եւ է հետքը որ հանգուցեալին անուանը արատ մը բերէ: Իբր հայ՝ Սարգիս Համամեծան ոչ բարի մարդ մը եղաւ, ոչ չար մարդ մը իր պաշտօնին մէջ: Եւ, զէթ ինքի համար, Դրան ծառայութեան մէջ գտնուող ամէն հայ որ իր ազգին շարիք մը չընէր, արդէն «նովին գործովն» ազգին բարիք մը ըրած է: Համամեծան Սարգիս իբր հայ իրեն նշանաբան ունէր «ոչ կարեք երկուց տէրանց»ը: Ուստի եւ անոր մահուանը եթէ օրտեքնիս տրտմութեամբ չի համակիր, բայց բերաննիս ալ դատապարտութեան վճիռ մը չարձակեր:

Սարգիս Համամեծանի անունը կցուած է հայ պաշտօնատարութեան և փառաւոր թուականին: Երեւոյնեւ հինգ, քառասուն տարի առաջուան եւրոպական հանդէսներու, եւ շատ կարեւոր հանդէսներու մէջ, տեսած եմ Հայոց վարչական ձիրքերու վրայ գնահատումներ որոնք հիմնուած են Դրան հայ պաշտօնեաներու կողմէ օսմանեան կայսրութեան մատուցուած ծառայութեանց վրայ: «Դիւրը միակ պաշտօնատուն մը կայ որ եւրոպական կանոնաւորութեամբ կը վարէ ամէն գործ, եւ այդ՝ Խարիճիէն է. ու Խարիճիէն ալ բոլորովին Հայոց ձեռքն է» կը գրէին այդ հանդէսները: Այդ բարեկարգ կանոնաւորութիւնը հիմնելու մէջ մեծ աշխատութիւն ունեցած է Սարգիս Համամեծան, իբրև ընդհանուր քարտուղար Արտաքին Գործերու պաշտօնատան թղթակցութեանց ղեկանին: Փրանսերէն լեզուին քաջ տեղեակ, սուր յիշողութեան տէր, եւ վարչական յատկութիւններով օժտուած մարդ, հայազգի ընդհանուր քարտուղարը կարգադրուած Արտաքին փաշտաններու նման անձնաւորութեանց կատարեալ վստահութիւնը գրաւել:

Սարգիս Համամեծան միակ հայն է որ սուլթան մը ներկայացուցած ըլլայ Եւրոպական մեծ մայրաքաղաքի մը մէջ: Հոմի օսմանեան ղեկավարն էր, ու երկու տարի վարեց այդ ծանր պաշտօնը:

Պոլիս եւրոպական ընկերութիւնը, որ ընդհանրապէս արհամարհոտ աչքով կը նայի Արևելեան ընկերութեան վրայ, բացառիկ յարգանք կ'ընծայէր Տիկին Զարուհի Համամեծանի: Իզմիրցի տիկինը, Փրանսերէնի քաջ տեղեակ, իր ամուսնին քաղաքական ղիրքին համապատասխանող բարձրութեան վրայ կը մնար, բարձր պահելով հայուհիին համբաւը:

Յունուարի գիշեր մը, 1879ին, Պոլիս Արարատեանի պարահանդէսը կը տրուէր, Փրանսայի ղեկավար Պ. Ֆուրնիէի հովանաւորութեան ներքեւ: Ներկայ էին այն բոլոր հայ ընտանիքները որոնք Պոլիս անուն մը ունին վաճառականութեան, սեղանաւորութեան, պետական պաշտօնատարութեան մէջ: Պ. Ֆուրնիէ միջոց մը մօտակայ օթեակներէն մէկուն այցելեց, ու երկար ժամանակ մնալով խօսակցեցաւ հոն բազմոց տիկին՝ հետ: Փոփոց մը կ'ընթացար ամէն կողմ, «հայ ըլլալու չէ, ֆրանսացի ըլլալու է» կ'ըսուէր օթեակներուն մէջ. բայց ճշմարտութիւնը, շատ մը հայ կիներու համար տիւր ու ճշմարտութիւնը, շուտ յայտնի եղաւ: Փրանսայի ներկայացուցիչը այցելած էր հայուհիի մը. Տիկին Համամեծանի:

Սարգիս Համամեծանի ուրիշ հայեր ալ յաջորդեցին արտաքին գործերու քարտուղարութեան պաշտօնին մէջ. բայց ոչ ոք անոր չափ վարչական մարդ հանդիսացաւ: Ատոնցմէ մին, Խորասանճեան Յովհաննէս, քաջ ֆրանսերէն գիտէր, ու միանգամայն զբաղեցրի տաղանդ սնէր. երբեմն Բարիզ իսկ զրական մարդ ձանչցուած էր, ու զեղարուեստներու հատոր մըն ալ հրատարակած: Խեղճը յետոյ Բարիզ ուղեղի դարմանատան մէջ մեռաւ, իբր սիրոյ զոհ:

Միւս հայ քարտուղարը եղաւ Նշան Սէֆերեան: Կ'ըսուի թէ օր մը մեծ սխալ մը ըրաւ. Խտալիոյ հետ առևտրական գաշնագրի մը նպայմանագրեալ Յամանակը լրանալուն մոռցած էր իմաց տալ, որով կառավարութեան մեծ վնաս պատճառեց, և այդ պատճառաւսկ պաշտօնանկ եղաւ: Հիմակ պետական խորհրդի անդամ է, Երևոյցը սուլթանին երկրորդ թարգմանն է. առաջինը՝ Քարաթէօտորի փաշան ըլլալով:

Ուրիշ հայ քարտուղարի անուն չեմ յիշեր: Հայերուն յաջորդեց Սիրիացի քրիստոնեայ մը, Նաուս, որ Լիբանանի կուսակալ անուանուեցաւ: Հիմակ ալ թիւրք մըն է այդ պաշտօնին զուգը: Եւ սակայն այդ պաշտօնը իր առջի կարևորութիւնը կորսնցուցած է, պետական սպասարկութեանց ամէն ճիւղերը Երևոյց կեդրոնացած ըլլալով:

Կարևոր թէ անկարելի ըլլան արտաքին պաշտօնները, սուլթանը ոչ միայն հայերը այլ եւ ուրիշ ամէն քրիստոնեաները հետզհետէ կը հեռացնէ անոնցմէ: Մեծ մայրաքաղաքներուն մէջ Լոնտոն միայն քրիստոնեայ ղեկավար մը կայ, այն պատճառաւ որ կէս դարէ Անգլիոյ մօտ օսմանեան ղեկավարները քրիստոնեաներէ կը կարգուին: Իսկ ուրիշ շատ կարեւոր քաղաքները ոչ միայն քրիստոնեայ ղեկավար չնշանակուիր, այլև քրիստոնեայ խորհրդակալներու քարտուղարներութիւն ալ նուազած է, զրեթէ սպառած:

Սուլթանը թիւրքեան թրքացնել կուզէ. պիտի յաջողի: Ընդհանրապէս Ամէն պարագայի մէջ, թրքաւորութիւնը ինչ որ կայսրութիւնը պիտի փրկէ. ընդհակառակը՝ Ա. Ա.

ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍԸ

Շարունակաբար տես Նոր կեսեր թիւ 7 Ապրիլ 1

«Պրոպագանդիստ» ին առաջին գլուխը հրատարակուելի յետոյ, հեղինակը ուղեւորելու հարկադրուած ըլլալով չկարողացաւ շարունակաբար գրել: Մեր ընթերցողները ակադրուած խնդրանքներով կ'ընչային այս նրբահիշտ վիպակին վերսկսուած շատով տեսնել: Անտարակոյ շատ հաճելի անակնկալի մը պիտի հանդիպին «Նոր-կեսեր» ի Երրորդ տարգրան վերջին քիչիկ մէջ իրենց փախարիկ իրականացուցել սկզբնաւորութիւնը տեսնելով:

Գ.

Աշտ իր քրոջ ընկերակցութեամբ ուղղուեցաւ Մարտիկի տունը: Երբ հասաւ, արդէն հոն էին գլորոցի կառավարիչը՝ Պ. Ղուկաս, և Արիւծ թաղի Պատուհաս խմբին միւս երկու անդամները որոնք տակաւին անձնօթ են ընթերցողներուն: Այդ երկու անդամներէն մին՝ Ակորճան աղա՝ խանութպան էր Պոլսոյ շուկան: Քառուսնը անցուցած՝ հանգարտաբարոյ, պարզասիրտ մարդ մըն էր: Կինը մեծած էր շատոնց, երկու մանչ զաւակ ձգելով ուրոնք, արդէն իրենց գլորոցական շրջանը աւարտած՝ տունը կը մնային, սպասելով որ հարեանին իրենց արձանի ու յարմար գործ մը գտնէր: Թէեւ խանութպանին բաղձանքն եղած էր զանոնց շուկան իր բարեկամներուն քով տեղաւորել, բայց երկու ուսումնասարտներու կողմէն այնպիսի անդրդուելի «ոչ կարեմք» ի մը հանդիպած էր որ ստիպուած էր անգանալի կերպով հրաժարիլ այս երազէն: Միակ ասպարէզը որ բազմ ունէր աղոց կողմէ ներողամտութեամբ ընդունուելու, պանքայի մէջ պաշտօն մըն էր, պայմանաւ որ գործը թեթեւ՝ և ամսականը լեցուն ըլլար: Խանութպանը ամիսներով զիմուներու պարտած էր բոլոր անոնց քով որոնք կրնային հեռուէն մօտէն ազդեցութիւն ունենալ պանքայի տնօրինութեան վրայ, բայց ի գուր. անորոջ խոստումներէ և նոյնիսկ բացարձակ մերժումներէ ուրիշ զրական արդիւնքի չէր յանգած: Ու ալ յուսահատ՝ ըսած էր ինքնիրեն:

— Սպասե՛ք նայե՛ք ի՞նչ կ'ըլլայ. հարկաւ փոփոխութիւն մը կ'ըլլայ... ասանկ չի մտար ես:

Խեղճը չէր գիտեր իսկ թէ ի՞նչ տեսակ փոփոխութեան կը սպասէր կամ ի՞նչ տեսակ փոփոխութիւն պէտք էր որպէս զի աղաքը թեթեւ գործով ու լեցուն ամսակա նով կարելի ըլլար պանքան տեղաւորել:

Փոփոխութեան ակնկալու այս սպասողական զիրքին

մէջն էր Ակորճան աղա երբոր նշմարեց որ փոփոխութիւն մը կատարուած էր իր մօտը, քիթին ասակ: Պարոն Աշտի կրած փոփոխութիւնն էր այդ: Երիտասարդ զասատուն, որուն մինչեւ այն ատեն թաղին մէջ ոչ ոք ուշադրութիւն զարձուցած էր, մէկէն ի մէկ մարդ մը, հեղինակութիւն մը եղած էր որ պատկառանք, նոյնիսկ երկիւղ կը սփռեր իր շուրջը: Ամէն ծանրակշիռ զեպքին,

— Միտիւ Աշտին կարծիքը ի՞նչ է արդեօք, ճայնն էր որ կը լսուէր,

Ու շատ անգամ երբ որ եւ է խնդրի մը կատարման միջոցներուն վրայ խորհուէր, նորէն Աշտին անունը կը տրուէր:

— Միտիւ Աշտը ուզէ նէ՛ կ'ըլլայ:

Երիտասարդ զասատուն ընծայուած այդ ամենագոր կարողութիւնը անշուշտ քիչ մը շափազանցուած նկատեց Ակորճան աղան, այսուհանդերձ անկարելի էր չընդունիլ թէ ազդեցութիւն մը ունէր ազգային ճակատագրին վրայ: Չէ՛ մի որ յեղափոխական էր:

Յեղափոխական ... ու Ակորճան աղային մարմնէն սարսուռ մը կ'անցնէր: Դեռ քանի մը տարի առաջ կը ծաղրէր, կ'արհամարէր այդ «աշճի ու այվազ ալալը» ն. բայց անկէ ի վեր յեղափոխութիւնը կոխներ մղել, մարդիկ սպաններ, զոհեր տուեր, ուսմբեր պայթեցուցեր ու սարսափ ձգեր էր ամէն զի: Հիմակ ալ պատկանանքով՝ երկիւղածութեամբ կը խօսէր խանութպանը յեղափոխականներուն վրայ, կամ մանաւանդ կը ջանար բնաւ վրանին չխօսելու:

— Ասիկա Հայու գործ չէ. ինկիլիզը կայ ետեւին, կ'ըսէին Ակորճան աղայի շուկայի ընկերներէն ոճանք որոնց խօսքը ծանրկէկ հեղինակութիւն մը կը ստանար սա մասնաւոր պարագայով որ, իրենց խանութի պարանքներէն մէկ մասը ուղղակի Մանչէսթըրէն բերել կուտային:

— Միտակ ինկիլիզով չըլլար, Մոսկոֆն ալ հետը է, կը սպրդէր թէլի վաճառական մը, որուն համար ուսուական զիւանագիտութիւնը գաղտնիք մը չունէր յորմէհէտէ Օտեսացի վաճառականի մը հետ գործ ընել սկսած էր:

Այս միջոցներուն էր որ խանութպանը գաղափար յղացաւ Աշտի զիմելու պանքայի մէջ իր աղոց, Սեղրակի ու Գարեգինի, գործ մը գտնելու համար:

Իրիկուն մը, ճաշէն ետքը, ներկայացաւ գասատունին տունը եւ սովորական բանաձևներէ ետքը խօսք բացաւ ազգային կացութեան, վերջին յեղափոխական զեպքերուն, բանտարկութիւններուն վրայ: Թիւրքերուն զէմ սոսկալի հայհոյանքներ տեղաց, «ան վերինը... վերինին խաֆան ճգմելու է» ըսաւ սպանական կերպով, յեղափոխականներուն քաջութիւնը փառաբանեց և անտարբեր, թէև խորամանկ, կերպով մը հարցուց թէ «ինկիլիզէն ու Մոսկոֆէն զաա, գործին ետեւ Գրանտըզն ալ կա՞ր մի»:

Աշոտ որ ո՛չ Ակորճան աղայի այցելութեանը կը օպա-
սէր, ո՛չ ալ այդ տեսակ խօսակցութեան մը, ափ ի բե-
րան մնաց: Պահ մը կասկածեցաւ որ զինքը խօսեցնելու
և բերնէն բան քաղելու համար եկած էր, սակայն այդ
մտածումը երկար չտեւեց: Ակորճան աղա խոհեմ, հան-
գարտաբարոյ մը ճանչցուած էր թաղին մէջ, բայց ո՛չ
երբեք ցածութիւն մը գործելու կարող:

—Չէ, կը մտածէր Աշոտ ինքնիրենը, երբ խանութ-
պանը կը խօսէր, այս մարդը վատ մտածումով մը չէ ե-
կած հոս և իր խանգալառութիւնը անկեղծ է,

Եւ պաստտուն հպարտ գահունակութեամբ մտիկ կ'ը-
նէր իր խօսակիցը, ատեն ատեն զլսի շարժումով մը,
հաւանականութեան պզտիկ բռնով մը քաջալերելով
զայն:

Կարգը իրեն եկաւ խօսելու: Աշոտ պարզեց ապագայ
Հայաստանի քաղաքական, վարչական և տնտեսական
դրութիւնը, տուրքերու բաշխման ու գանձման կերպը,
գատական նոր կարգ ու սարքը, հողերու և ստաց-
ուածքներու բաժանումը, աստիկանական կազմակեր-
պութիւնը, բանակը, կրթական ծրագիրը, նամակի զը-
րոշմաթուղթերուն վրայի նկարը, վերջապէս ինչ էր
լսած, կարդացած ու երագած իր յեղափոխական ըլլա-
լէն ի վեր:

Ակորճան աղայի համար քիչ մը շատ զիտական ու
վերացական երեցաւ տրուած բացատրութիւնները, և կըր-
նանք ըսել որ ապագայ Հայաստանի կազմակերպութեան
մասին շատ տարտամ գաղափար մը միայն կրցաւ կազ-
մել: Այսուհանդերձ Աշոտին խօսքերէն հաստատ կ'երևար
որ քիչ ատենէն ամենամեծ փոփոխութիւն մը առաջ պիտի
գար թիւրքիոյ մէջ, օտակալի զղրղիւն մը որ տակնուվրայ
պիտի ընէր ամէն բան եւ ուրիշ պիտի ծնէր իրերու նոր
վիճակ մը:

Խանութպանը այդ ըլլալիքներուն հսկայականութենէն
«ահմուկ» ինքնիրենը եզրակացուց թէ միայն ինկիլիզով
ու Մոսկովիով ըլլալիք բաներ չէին ասոնք, և թէ ապա-
հովաբար գործին ետեւ Ֆրանսոզը, Նէմցէն ու Թալիանն
ալ կեցած էին:

Ու ալ աւելի հաճոյ ըլլալու համար գնաստուին, և
մանաւանդ իր ընկելը գիտումին սիրոյն համար, փա-
փաք յայտնեց ձեռքէն եկած ծառայութիւնները նիւթական
թէ բարոյական, մատուցանել սուրբ գործին:

—Գիտե՞ս ա՛, ես շուկան շատ մարդ կը ճանչնամ,
կրնամ օգտակար ըլլալ... զոն ինձի աղէկ նայէ՛ միտիւ
Աշոտ, ես ալ հին ազգասէրներէն եմ, հայու արիւն կը
կրեմ... Սարգիս պատրիարքին ատենը ժամը գացած
տէ՛ «չլիշուի» պողացած եմ... Հէ՛մ էլ պաշիններէն ալ
մէկն էի:»

—Քանի որ այդչափ փափաք ունիս օգտակար ըլլա-
լու, եկուր քեզ մեր խմբին մէջ անոնք, պատասխանեց
յանկարծ Աշոտ, որուն մտքին մէջ արդէն այդ գաղափարը

ծներ էր խօսակցութեան միջոցին:

—Ո՞ր խումբին, հարցուց Ակորճան աղա, երեսին
գոյնը նետած:

—Իմ կազմած «Պատուհաս» խմբիս:

—Ամա՛ն ի՛նչ կ'ըսես միտիւ Աշոտ, իմ գո՛րծօ է ա-
տիկա. տարիքս առած մարդ, զաւակներու տէր, ես կըր-
նամ ասանկ վտանգաւոր բաներու մէջ մտնել, գոչեց
Ակորճան աղա որ արդէն «խումբ» բառէն զող ելած «պա-
տուհաս»ն ալ լսելով, յեղափոխութիւն, Հայաստանի
փրկութիւն, պանքայի գործ, ամէն բան մոռցեր ու չձեռ-
բակալուած Աշոտի տունէն իր տունը վերադառնալու կա-
րելիութեան վրայ կը մտածէր:

Աշոտ որ դեռ ժամանակ չէր ունեցած հասկնալու
խանութպանին այցելութեան բուն շարժառիթը, զարմա-
ցաւ, գրեթէ բարկացաւ Ակորճանի այս փոփոխական,
յեղչեղուկ ընթացքին, և գրեթէ յանդիմանական կերպով
պատասխանեց.

—Բայց Ակորճան աղա զոն էիր որ քիչ մը առաջ
յեղափոխութեան օգտակար ըլլալու փափաք կը յայա-
նէիր. զոն էիր որ եկար իս գտար ու այս գործերուն
վրայ խօսք բացիր: Ի՛նչ ծառայութիւն պիտի կրնաս մա-
տուցանել մեզի քանի որ խմբի մը մասնակցելու գա-
ղափարն անգամ քեզ ատանկ տակնուվրայ կ'ընէ կոր:

—Աղէկ ամա, տղաս, մտիկ ըրէ՛ որ ըսեմ...:

—Պարապ խօսքեր լսելու ատեն չունիմ... խօսքի
ժամանակը անցուցինք, հիմակ գործելու ժամը հնչեց:
Մենք հոգի չունինք, մենք ընտանիք չունինք. սակայն
ամէն բան մէկ կողմ նետեր, յեղափոխութեան զոհած
ենք ինքզինքնիս: Կը կարծես որ եկեղեցիին մէջ «չլիշուի»
պողալով ազգասիրութիւն ըրած կ'ըլլաս: Ատոնք տիրա-
ցուական բաներ են... տիրացուական. ատանկ բաներով
ազգ մը գերութենէ չազատիր: Ճշմարտապէս յեղափոխու-
թիւն կ'ուզես ընել, պէտք է կնիկ, զաւակ, հայր, մայր,
տուն տեղ, խանութ, ամէն բան մոռնաս, ամէն բան զո-
հես... ամէն բան, եթէ ոչ չէ թէ միայն յեղափոխական
չեռ կրնար ըլլալ, այլ նոյն իսկ արժանի չես ազատու-
թեան, արժանի չես իբրև մարդ ապրելու...:

Աշոտ իր խօսքերուն ուժգնութենէն մղուած, ոտք ելաւ
և սկսաւ շրջիլ սենեակին մէջ:

Խանութպանը՝ «ահմուկ» մտիկ ըրեր էր այդ պողո-
կումը, մարդու մը պէս որուն ականջին տակ յանկարծ
ատրճանակ մը կը պայթեցնեն: Չգացեր էր որ խօսքե-
րու այդ հեղեղատը քշեր տարեր էր Սեղրակի ու Գա-
րեգի նի պանքային գործը (թեթեալ լեցուն ամսակա-
նով գործը). միևնոյն ժամանակ Աշոտի բարկածայթ
յանդիմանականը խոցեր վիրաւորեր էր իր սիրտը, մա-
նաւանդ «չլիշուի»ի մասին ըրած բռնամարտական ակ-
նարկութիւնը. «չլիշուի», ան որ տարիներով փառքի տիտ-
ղոս մըն էր ըրած իրեն, մանաւանդ յեղափոխութեան ծա-
գունէն ի վեր, եւ յաճախ ազգային շարժումին մասին իր

ցոյց տուած ձեռնպահութիւնը արդափացնելու համար «չխիշուի» նեւած էր դիտողութիւն ընդունելուն երեսին՝ աւելցնելով, «մենք մեր պարտականութիւնը ժամանակին կատարեցինք, հիմա կարգը ուրիշներուն է»։ Ու ահա պանքայի գործին հետ այդ «պարտականութիւն» ալ կը քայքայուէր հիմակ։

Երիտասարդ դասատուին բարկութիւնը չէր հանդարտած. տակաւին շատ բաներ ունէր ըսելիք Ակորճան աղային, որուն մէջ մարմնացած կը տեսնէր հայ ժողովուրդին ամբողջ մէկ մասը, կեղծաւոր, երկդիմի, շահասէր ու ետամուլ մասը, որ զժազրուեր, իր որոշ ձեւն ու ուրոյն նկարագիրը առեր էր յեղափոխական շարժումէն ի վեր։

— Բռնակալութեան եւ ազատութեան միջեւ մղուած կրօնաբան շէջոց հանդիսատես մասն էր ան. միշտ արթուն, միշտ ակնդէտ, որ օրը օրին կը փոխէր իր դիրքը, չէզոքութենէն դուրս ելլելու ձեւ մը կ'ընէր, հակելու համար նոյն միջոցին զօրաւորագոյն երեցող կողմին, որ սրտանց փափագող էր ազգային դատի յաղթանակին եւ որ սակայն հովուով մարմնով պիտի նետուէր թիւրքին ոտքը եթէ երբեք յեղափոխութիւնը չխախտուէր։

Աշոտ կանգ առաւ խանութպանին առջեւ։

— Ազգասէր էք հէ՛, պոռած երեսին, ազգասէր էք երբոր ածան ազգասիրութեան վրայ է խնդիրը, երբոր այդ ազգասիրութիւնը կը կայանայ մտաւոր անճիգ, անվատ, անհետեանք թոյլ կամեցողութեան մը մէջ։ Այո՛ ազգասէր էք, ըսելիք չի կայ, քանի որ կը փափագիք ազգին ազատամանը թրքական լուծէն... միայն թէ ասոր համար ամենաչնչին ճիգ մը, ողորմելի զոհողութիւն մը պէտք չէ պահանջեն ձեռնէ։ Ազգասիրաբար պատրաստ էք վայելելու ուրիշներուն անձնութեան արդիւնքը... Ասկէ զատ, ազգասէր էք քանի որ լրտեսութիւն, մատնութիւն չէք ընէր ու հեռուէն հեռու, ծածկաբար, հաւանութեան գլխի շարժումներ կ'ընէք մեզի։ Ինձի համար, շիտակը, մատնիչներէն աւելի վատ էք զուր... զոնէ անոնք ինքզինքնին կը վտանգեն, որոշ, թշնամական դիրք մը կ'առնեն ու կեղծաւորաբար չէզոքութիւն չեն պահեր, յարմար ժամուն յաղթանակին բաժնեկից ըլլալու յոյսով... հոգ չէ թէ յաղթողը ո՛վ ըլլայ, բաւական է որ զուր առանց վնասուելու կարենաք անոր ոտքերուն փարիլ...։

Աշոտի վերջին խօսքերը ա՛լ բոլորովին տակնուվրայ ըրին Ակորճան աղան. ուզեց բողոքել, ինքզինքն ու իրենպէսները արդարացընել, մեղմացուցիչ պարագաները փաստաբանել, բայց անկարող եղաւ բառ մը զըտնելու։ Կը զգար որ քիչ մը չափազանց էին այս խօսքերը սակայն հիմը ճշմարիտ էր։

— Պատասխան չի տա՞ն, Ակորճան աղա, հարցուց Աշոտ որուն բարկութիւնը անցեր էր սրտին մէջ կուտակուածները դուրս տալէն ետքը, եւ որ կը սկսէր արգահատիլ խեղճ խանութպանին շլմորած վիճակին։

Յեղափոխականին մեղմացումէն քաշալերուած՝ միւսը պատասխանեց։

— Ի՛նչ ըսեմ, միւսիւ Աշոտ, քիչ մը իրաւունք ունիս, բայց ի՛նչ կուգայ ձեռքէս... ես ո՛չ մարդ կրնամ սպաննել, ո՛չ ումք նետել, ս՛չ ալ լեռը քաշուիլ կոխ ընելու համար։

— Բեզի ո՛վ առաջարկեց այդ բաները։

— Հապա խումբին մէջ մտնելու խօսք չ'ըրիր...։

Աշոտ սիտաւ խնդալ. յետայ բոլորովին անուշցած, բացատրեց թէ ի՛նչ էր խմբակցի մը պարտականութիւնները եւ գործը։

Խանութպանը հետզհետէ սիրտ առաւ յեղափոխականին բացատրութիւնները լսելով, եւ երբ Աշոտ խօսքը աւարտեց, Ակորճան աղա արդէն որոշումը տուած էր «Պատուհաս» ի անդամներէն մէկը ըլլալու։

— Թաղականի կամ հոգաբարձուի պէս բան մըն է աս ըսածը, կը մտածէր ինքնիրեն. շաբթէ շաբաթ պիտի ժողովուրդը մեր թաղին մէջ ու պիտի խորհրդակցինք, երբեմն ալ քանի մը դրուշ պիտի տանք։ Գիչ մը զգուշութիւն ընելով, անվտանգ կրնամ կատարել դերս եւ ի փոխարէն յեղափոխական պիտի ըլլամ՝ ամբողջ Երրօպան ետիս ունենալով... տղաքս չէ, ես անգամ պաշտօն մը կըրնամ ձեռք ձգել պանքային մէջ... պանքային մէջն ալ ըլլայ նէ՛՝ սարաֆլար քեհեասի կրնամ ըլլալ։

Մտովի կատարած այս խորհրդածութիւնը սակայն հետեւեալ կերպով հաղորդեց զաստուին։

— Ապրիս, միւսիւ Աշոտ, իրաւունք ունիս, հազար անգամ իրաւունք ունիս... ի՛նչ է այս կեանքը, ապրիլ է պէտք սիկա... գերութեան մէջ... մարդ մէկ անգամ պիտի մեռնի, չէ՛ մի... կը զոհենք կեանքերնիս պէ, ... թո՛ղ Ակորճան աղա մը պակաս ըլլայ, բայց ազգը փրկուի... զրէ պէ՛, ինձի ալ զրէ Պատուհաս խումբին մէջ... խերն անիծեմ խանութիս ալ, գործիս ալ... կեցցէ յեղափոխութիւն, եկուր ճակատդ պագնեմ... Աստուած վկայ, խօսքերդ անանկ ազդեցութիւն ըրին վրաս որ, հիմակ եթէ դէմս տաճիկ ըլլայ փէտստէքին կը հանեմ... պոսպա մը չունիս, սա պատուհասէն պէքեքին վրայ նետենք։

Ահա՛ ինչ պարագաներու մէջ Ակորճան աղա Արիւծ թաղի Պատուհաս խումբին մէջ մտաւ։

(Շարունակելի)

ԱԳՈՒԱԽՆԵՐԸ

Շատ յատկանշական էլ մը կարելի է գրել շահատա-
կութիւններովը բոլոր անոնց որոնք այս վերջին տարի-
ներս հայկական աղէտքները շահագործեցին՝ քարոսփէն
խելայեղ սուլթանէն կորզելու համար դրամ, շքանշան,
ատտիճան, արտօնութիւններ եւ այլն: Թող ինչ որ
գնտանին մէջ իրենց կալանաւորին մշտնջենական զար-
հուրանքը քամող փոխառի, Եւրոպայի մէջ հարիւրա-
ւորներ են, խմբագիր, երեսփոխան, պաշտօնակալ, օե-
ղանաւոր ու բաղդախնդիր, որոնք ամէն միջոցներով դրամ
կտրեցին մեր աղէտքներէն, և ամէն ջանք ի գործ դրին
խեղդելու համար մեր անձկութեան ու խուճապի աղաղակ-
ներուն արձագանգները:

Այս կարգի ձեռնարկի՞ մըն է, աւելի նորօրինակ ու
աւելի խիզախ ձեռնարկի մը, որ հանդիսատես ենք այս
վայրկեանին:

Ահա դէպքերը:

Ֆրանսական Մաքեկ եւ Ֆրանսէի թերթերը յանկար-
ծական հայասիրութենէ մը բռնուած, վերջերս պայքար
մը օկոսան սուլթանին և իր վարչութեանը դէմ, անսովոր
հագածութիւն մը նուիրելով մեր հին ու նոր ցաւերուն:
Այդ պայքարին սակայն ամէնէն ուշագրաւ մասն է այն
հրապարակումը զոր ֆրանսական երկու թերթերը կու-
տան Պէտրղան փաշայի որդի քիւրտ Օսման փաշայի մը
ծրագիրներուն:

Այս Օսման փաշան, որ այժմ Ֆրանսա կը գտնուի,
ձայնը հասած տեղը կը պոսայ թէ, յառաջիկայ գարնան
Քիւրտիստան մտնելով գաղտնի ճամբէ մը, հարիւր հա-
զար Քիւրտի և Հայու զուրթը անցած՝ ապստամբութեան
զրօշակը պիտի պարզէ սուլթանին դէմ, Կ. Պոլսոյ վը-
րայ պիտի քալէ և Ապտիւլ Համիտը պիտի զլխատէ...
Ամէն բան պատրաստ է. զէնքի մթերանոցները լեփ լե-
ցուն, մարդիկը կազմ եւ արթուն, լոկ նշանի մը ակնդէտ.
միայն, բնականաբար պէտք է ձիւնհալին սպասել՝ սկսե-
լու համար զարհուրելի ապստամբութիւնը որ մղեղի մը
պէս պիտի ալէ տանի սուլթանը եւ իր գահը:

Մաքեկի եւ Ֆրանսէի խմբագիրները պատմեցին Օս-
ման փաշայի հետ ունեցած տեսակցութիւններն: Օսման
փաշա կը ներկայանայ ո՛չ միայն իբր մարդ մը որուն
խիղճը ըմբոստացած է իր տիրօջը գարչութիւններէն, այլ
և իբր անկեալ վեհապետ մը որ իր հօրենական ժառան-
գութիւնը կը պահանջէ իբր Քիւրտիստանի է-լի: «Թէ՛
մարդկութեան, թէ՛ իր հայրենիքին և թէ՛ իր հպարտու-
թեան ծառայելու համոզումով լեցուած, ինքզինքը կարող
կը զգայ յաջողցնելու ձեռնարկ մը որուն մինչեւ հիմակ
ոչ ոք յանդգնեցաւ հարստահարեալներուն բազմութեան

մէջէն: Թիւրք ժողովուրդը իր ստրկութեան խոնջէնքին և
իր կրօնքին ճակատագրականութեանը մէջ բռնուած, կը
օպատէ: Օսման փաշա, որ վերջերս Ապտիւլ Համիտի
երեսին նեւեց իր զօրավարի օւսնոցները՝ յաղթուած
հին է-լիներուն ապստամբական յատկանշանները ձեռք
առնելու համար, յուսացուած աշատորարը պիտի ըլլա՞յ:
Ինք կը հաւատէ թէ այո՛, և իր ըզածները վաղուան
Պատմութեան նախաբանը կը կազմեն:»

Ու ինչն էր ջըտեր քիւրտ է-լիքը, կամ թերևս աւելի
ձիւտ ըլլայ ըսել, Ֆրանսէի խմբագիրը ինչն էր չի գնի
Օսման փաշայի բերնին մէջ: Երեք ամիսէ ի վեր Բարիզի
պզտիկ օթէլներուն մէջ պահուած, — ծածուկ մտալու
համար սուլթանին ստիկանութենէն որ այնքան կա-
տարեալ է Սէնի որքան Վասիլիի ափերուն վրայ, —
հաղորդակցութեան մէջ է ան թիւրքիոյ բոլոր գաղտնի
ընկերութեանց քօմիթէներուն հետ: Այսօր, համաձայ-
նութիւնը կատարեալ է և պատրաստութիւնները աւար-
տած: Քիւրտ, Յոյն, Ալպանիացի, Հայ, Մակեդոնացի,
բոլոր ճգմուած ազգերը և բոլոր սոսնակիս մարդիկը մէկ
թափով ոտքի պիտի ելլեն հասարակաց բռնաւորին դէմ:
Ապտիւլ Համիտ, այս հեռապատկերէն խելայեղ, իր Բա-
րիզի դեսպանատան խորհրդականներէն մէկուն միջոցաւ
հաշտութիւն և պատիւներ տալարկեր է իրեն, բայց
Օսման փաշա խաբեպատիր կը գտնէ այդ հաշտութիւնը,
և չնչին՝ այդ պատիւները. թո՛ղ սուլթանը յայտ չգնէ իր
զօրքերուն թիւին և կրօնական մոլեռանդութեան ուժին
վրայ. այդ յայտը ի դերն պիտի ելլէ:

Քիւրտիստան հասնելուն պէս, — և սուլթանը ինչ
որ ալ ընէ՝ պիտի չկրնայ արշիլել Օսման փաշայի մուտ-
քը — իր ձեռքին տակ պիտի գտնէ հարիւր հազար հոգի,
թէ տեղական զօրքէն, և թէ շատնց ի վեր պատրաս-
տուած նոր խուճաբէ: Քիւրտ Համիտիէ հեծելազօրքը
բնականաբար իրենց հետ է, անոր զլխաւոր պետերէն մին
իր գաղտնի տեղակալն է և զօրաբանակի մէկ քսնի հրա-
մանատարներ, է՛ն կողմերէն, զինքը կը թսնանձեն որ
անմիջապէս գործին ձեռք գարնէ: Միւս կողմէն, քսնի որ
իրենց Մարգարէին հաւատարիմ զաւակներն են, վախ
չունին իսլամ մոլեռանդութենէն. չէ՛ մի որ իրենց աւելի
ճշմարիտ հաւատացեալներ են քան Երլտզի կալանաւորը:
Ու Օսման փաշա կամացուկ մը Ֆրանսէի խմբագիրն
ականջն ի վար կը սահեցնէ թէ, Շէրի-իւլ-իւլաֆն ալ,
որ զինքը անուանող վեհապետները գահազուրկ ընելու
ահեղ իշխանութիւնը ունի, է՛հ ան ալ իր ձեռքն է:

Ամէնը աս չէ: Օսման փաշան ընդհուպ Երիզտու
պիտի երթայ, ուր, հա՛րկ է ըսել, իս ոչ լը սո՛հալաբ ի-
րեն կը օպատէ, ինչպէս նաև Մարգարէին սերունդէն ա-
րաբ կրօնաւորներ որոնք իսլամութեան հրաւեր պիտի
կարդան սրբազան պատերսլմ հրատարակել Ապտիւլ
Համիտի, Մուհամմէտի կրօնքին այդ կենդանի ամօ-
թին դէմ:

Այսպէս ժողովրդին, զօրքին եւ կրօնաւորներուն հա-
մակրանքին վրայ ապահով, Օսման փաշայի սիրաբար հան-
դարտ չէ օտկայն, մէկ վախ մը սննի, — զիւանագիտական
կնճռատութեանց վախը: Քիւրտիստանը, օւսկից ազա-
տագրութեան նշանը պիտի մեկնի, բնական եւ Ռուսիոյ
ըղձացած ճամբան է ղէպի Հնդկաստան: Ու փաշան կը
վախնայ որ, բարեկարգութիւնը պահպանելու պատրու-
կով, Ռուսիա առիթէն կ'օգտուի զրաւելու համար ամբողջ
Քիւրտիստանը: Այս մասին Օսման փաշա Լանտոն գացքը
Արտաքին գրքոճերու նախարարութեան հետ տեսնուել է,
ու առած պատասխանները շատ ապահովիչ չեն: Բայց,
պա՛հ, առանց վտանգի յեղափոխութիւն չի կայ: Փաշան
այնպէս մը պիտի ընէ որ Ռուսիա ամբողջ Եւրոպան իր
գէժը գտնէ, եւ Եւրոպա ալ օտկայուի միանգամ ընդ միշտ
լուծելու օտ Արեւելեան հարցը. Ամէն:

Ֆրանսացի խմբագիրը, որ այս ամէնը անայլայլ մտիկ
ըրած է, միամտութեամբ մը՝ զոր ի զուր կը շանայ բը-
նական ընծայել, զարմանք կը յայտնէ թէ փաշան ինչպէս
կը հրապարակէ հիմակուրնէ իր գաւազրութեան ծրագիր-
ները եւ պատերազմի յատակագիծները:

— Ատիկա ալ մերոզմագիտութեանը մաս կը կազ-
մէ, կը պատասխանէ միւսը անխուփ: Սուլթանը բան մը
չի կայ որ չիմանայ իր օտարականութեան ձեռքով. մինչդեռ
այս բաներուն արձագանգը, թափանցելով մեր դժբաղդ երկ-
րին խորը, ուր ամէն մտածուած արգելուած է եւ ամէն
փրօփականտ՝ անկարելի, ժողովուրդը արթուն պիտի պահէ
եւ մեր ընկերները ակնդէտ:

Այս պատասխանին վրայ, ֆրանսացի խմբագիրը ա՛-
ւելորդ կը համարի անշուշտ հարցնել թէ Մարտին ե
Ֆրանսէն ինչպէս պիտի կրնան փրօփականտ ընել Քիւր-
տիստանի խորը. . . .

ՔԻՒՐՏԵՐԸ

Նախորդ թուով «Թիւրքիոյ չորս կողմը» տեսու-
թեան մէջ խօսած էինք քրդական հարցի մը ծագման
հաւանականութիւններուն վրայ: Պետրղան պէյի զաւակ-
ներէն Օսման փաշային ֆրանսական եւ անգլիական թեր-
թերէն ումանց ըրած յայտարարութիւնները քիչ շատ ու-
շաղրութիւն գրաւած են, մասնաւորապէս հայ շրջանակ-
ներու մէջ: «Ազդանները» վերնագրով յօդուածին մէջ
ընդարձակօրէն կը պարզուին ֆրանսական երկու թեր-
թերուն յօդուածները:

Բարիզի Օրօթ հայաօեր թերթը Պ. Քիւրտի գրչով
յարձակուած մը կը հրատարակէ ընդդէմ Օսման փա-

շայի զոր կը նկարագրէ իբր փառամօլ եւ արծաթաօեր
չարագործ մը, որուն նպատակն է մեծակալ գումար մը
առնել սուլթանէն, ու վերագանալ Պոլիս: Պետրղան
պէյին որդին Երլտղը պատահած ղէպքի մը առթիւ Մա-
նասթը սքօթորուած է եղեր եւ անէկ Եւրոպա անցած,
հիմակ կ'ըղձայ նորէն Պոլիս մտնել:

Քիւրտիստանի ինչպէս եւ Օսմանիւրի հրատարակելը
Օսման փաշայի եղբայրը Ապտիւրրահման փաշան է, որ
Պ. Քիւրտի շատ աննպատա խօսած է ի մասին իր եղ-
բօրը, զոր իրենց ընտանիքին իբր անպատիւ մէկ անդա-
մը նկատելով իրենց մէջէն վանտած են եղեր տասնըհինգ
տարիէ ի վեր:

Ըստ Ապտիւրրահմանի՝ եբք Օսման փաշա մեծաշա-
ռաչ աղաղակով կը հրատարակէ թէ Անատուլի մէջ
քիւրտ-հայկական յեղափոխութիւն պիտի պայթի, իր
ձգտումն է ներգործել սուլթանին վրայ եւ աւելի սուղ
վաճառել իր ազդեցութիւնը: Ապտիւրրահման Պ. Քիւ-
րտին խնդրած է որ Հայերը չխաբուին Օսմանի յիմա-
րական խոստումներէն: Սուլթան Համիտ հայերը կոտո-
բելու նոր պատրուակ մը կը փնտսէ, եւ Օսման փաշա զայն
անոր կը հայթայթէ:

Ապտիւրրահմանի կողմէն Հայոց եղած յանձնարա-
րականին մեծ պէտք մը չունինք: Մեր մարդերը մենք
աղէկ կը ճանչնանք: Աւազակապետի մը ալլաօերեալ
սերունդին հովանաւորութեանը ներքեւ մտնելու համար
չէ որ հայ ազգը Հայկական խնդիրը Եւրոպայի առաջ
դրաւ: Ապտիւրրահմանի յայտարարութեանց վրայ հիմ-
նուելով, Պ. Քիւրտը հետեւեալ տեղեկութիւնները կը
հաղորդէ:

«Ինքն իսկ, Ապտիւրրահման, քաղաքական տարա-
գրեալ մըն է, եւ մշտնջենական բերդարգելութեան գա-
տապարտուած է, ի բացակայութեան: Քիւրտերուն հա-
մար լաւագոյն ապագայ մը կերպով: Իր սրտէն արին
կ'երթայ մտածելով որ Քիւրտերը զրական կերպով միշտ
տղիտութեան եւ բարբարոսութեան մէջ պահուելով, համից
տական վրէժխնդրութեանց գործադիրները եղած են:
Քիւրտերը ֆոքը-Առիոյ ամէն ժողովուրդներէն աւելի Հա-
յոց մօտ են իրենց լեզուովը եւ ցեղովը: Ինչ ինչ շըր-
ջանակներու մէջ Հայոց հետ բարեկամաբար կ'ապրին,
եւ շտտ կարելի է ապագային համար համաձայնութեան
մը գաղափարը մտաբերել, միկնոյն ճնշումին ենթարկուած
զոհերուն միջեւ: Գէթ այս է ամենաշքեմ փափագը Ապ-
տիւրրահման Պետրղանի, որ իր ծննդովը բարոյական
մեծ ազդեցութիւն ունի իր հայրենակիցներուն վրայ: Ա-
հա վերջերս ինչ բացատրութիւններով անոնց կը դիմէր:

«Ո՛վ Քիւրտեր, որ միշտ հոշակաւոր եղած էք ձեր
արիւթեամբը, եւ ահաւառիկ դուք այսօր անվաս խեղճ
հայերը կը սպաննէք, որոնց ընդհակառակը դուք օգնու-
թեան պէտք էր հասնէիք, եւ հարկ էր որ զանոնք ձեր
հովանաւորութեան ներքեւ առնէիք: Ինչպէս մաքրել այն

արատները որոնցմով աղտոտուած էք այդ խեղճ մարդիկը սպանելով, մեղսակիցներ դառնալով Ապտիւ-Համիտի աաշտօնատարներուն: Այս է ձեր քաջարութիւնը, այս է պատուոյ եւ վեհանձնութեան ձեր հարմարը:»

Կամաւոր տարագրին ձայնը պիտի հասնի մինչեւ հեռաւոր վաչկատուններուն, եւ անոնցմէ մտիկ պիտի ըլլուի: Գեղեցիկ գործ մը կ'ընէ յանուն իր ցեղին բողոքելով, եւ այս Գիւրտը շատ աւելի քաղաքակիրթ կ'ենրեփ քան թէ եւրոպացի դիւանագէտները, նախարարները, տէրութեանց պետերը, որոնք կոտորածները կը ծափհարեն, և խողովիչէն ինքզինքնին կը շքանշանեն:»



Այս հրատարակութիւնը կարգ մը դիտողութիւններ կը թելադրէ մեզի:

Կատարելապէս համաձայն ենք այն տեսութեան թէ Օսման փաշա պարզապէս սուլթանին վրայ ներգործելու դիտումով հրապարակ նետած ըլլայ այն փրօցողոցոց յայտարարութիւնները որոնք Հայոց մեծապէս կրնան փնտսել: Նոր կեանքի նախորդ թուով այս նկատողութիւնը արդէն ըրած ենք: «Հաւանօրէն Օսման փաշա, կ'ըսէինք, կը հետեի այն քաղաքականութեան որմէն Երիտասարդ Թիւրքերը մեծապէս օգտուեցան, օչտակարութիւն մը որ սակայն Երլտզը միշտ մտառանջութեան մէջ կը պահէ: Սպասելով նորագոյն տեղեկութեանց, առ այժմ բաւական կը համարինք դիտել տալ թէ ինչ որ ալ ըլլայ Օսման փաշայի յայտարարութիւններուն կարեւորութեան աստիճանը, անոնք սուլթանին վրայ ազդելու ռազմանուած են: Ու հետեանքները մեզի նպատաւոր չեն կրնար ըլլալ»:

Օսմանի ցափոտուցները մենք մեզի համար փնտսակար համարած ենք, հիմակ անոնց չափ, եւ գուցէ անոնցմէ ալ աւելի, մեզի համար իբր աղիտաւոր կրնանք համարիլ Ապտիւրրահմանի հրապարակ նետած փափագներն ալ:

Եթէ Օսման հայեքիրտ ապստամբութեան մը սպառնալիքովը սուլթանին նոր պատրուակ մը պիտի հայթայթէ հայկական նորանոր կոտորածներու համար, միթէ Ապտիւրրահման ալ միեւնոյն պատրուակը պիտի չհայթայթէ ինքն ալ, և անչուշտ շատ աւելի ծանր հանգամանքներով, երբ մեզի հրապարակաւ կոչում կ'ընէ միաբանիլ Գիւրտերուն հետ ընդդէմ թրքական իշխանութեան: Ինչպէս Օսմանի ցնորական սպառնալիքներուն, նոյն եւ Ապտիւրրահմանի շահախնդրական թելադրութեանց պարագային սուլթանը ընդդէմ Գիւրտերուն չէ որ հալածանքները պիտի սատակացնէ:

Բայց հարկ է գիտնալ թէ ո՞վ է այդ Օսմանը, ո՞վ է այդ Ապտիւրրահմանը որոնք յանկարծ իբր «վտարանդի թաղաւորներ» երեւան կուգան, և յանուն «իրենց ժո-

ղովորդին» կը խօսին:

Գիտենք թէ Գիւրտերը ո՛չ կրօնապէս, ո՛չ քաղաքականապէս կազմակերպեալ ժողովուրդ մը կը ներկայացնեն օսմանեան կայսրութեան մէջ: Հայաստան ու Միջագետք Գիւրտ անունը կրող բազմաթիւ ցեղեր կան, ամէնքն ալ իրարմէ անջատ: Ո՛չ պատմական անցեալ մը, ո՛չ տոհմային արինը, ոչ վարչական կապ գտնուող իրարու կը միացնէ: Վանի Գիւրտը ո՛ր և է առջնութիւն չունի Տիւրքալէքիի Գիւրտին հետ: և ո՛չ ալ Մուշի Գիւրտը խարբերդի Գիւրտին հետ: Գիւրտ ցեղերէն շատ տերը իրարու թշնամի են եւ միշտ մէկգոյնու գէմ կը կոտին: Հայերը կողոպտելու, թալլելու, կոտորելու սնորագործութիւնն է որ Գիւրտերը մինչեւ աստիճան մը իրարու հետ համերաշխութեան մէջ կը պահէ:

Ինչ են Պետրղան պէյին օրդիքը, թոռները: Վաթսուն տարի առաջ Պոլիս բերուած քիւրտ ցեղապետի մը սերունդը: Ասոնք ալ ևս օտարական են իրենց երկրին: Ով որ իր ցեղին գլուխը չ'անցնիր ու չգործեր ան ալ ևս զիականացեալ պետ կը համարուի: Չայն յիշող չի կայ: Ու նոյն իսկ եթէ գտնուի, եւ ենթադրենք իսկ որ աստիճան մըն ալ ազդեցութիւն պահած ըլլան իրենց ցեղին վրայ, ինչ որ անհաւանական է, միթէ այդ մէկ կամ երկու ցեղերը բոլոր Գիւրտերը կը ներկայացնեն:

Ու յետոյ, այդ Օսմանները, այդ Ապտիւրրահմանները եթէ փոխանակ եւրոպական մայրաքաղաքներէն յոխորտալու, երթային երկիր եւ անցնելով ցեղերուն գլուխը գործնական ապացոյցներ տուած ըլլային իրենց անձնութեանը, իրենց քաջութեանը, եւ իրենց վայելած ժողովրդականութեանը, տարակոյս չի կայ թէ քիչ մը աւելի հաւատք պիտի ընծայուէր անոնց խօսքերուն:

Ապտիւրրահման կը հռչակէ Գիւրտերուն վեհանձնութիւնը, արիութիւնը, պատուաճանաչութիւնը: Կարելի է որ այդ թափառաշրջիկները պահած ըլլան արեւելեան կարգ մը առտնին առաքինութեանց ինչպէս՝ Հիւր մեծարելու, բարեկամի մը դէմ չդաւելու աւանդութիւնները, բայց մենք հայերս Հայաստանի այս դարուս պատմութեանը մէջ Գիւրտը ճանչցած ենք հասարակ աւազակ մը, գաւոռ յուղիակհար մը, վատ մարդասպան մը: Ու ոչ ապաքէն Ապտիւրրահման այս տխուր ճշմարտութիւնը ինքն ալ հաստատած կ'ըլլայ յայտարարելով թէ Գիւրտերը սուլթան Համիտի անգիտակից գործիքները վարձած են, եւ անփնտա հայերը, իմա՛ անգէն հայերը, շարդեր, կողոպտեր, թալլեր են: Ժողովուրդ մը որ իբնէ ազնիւ ու վեհանձն է, յանկարծ մէկ օրէն միւսը ամենաանարգ ոճիրներ գործելու չ'ատորանար, ի լուր հեռաւոր բռնապետի մը ձայնին: Չարագործութեան բնագոյններով ախտաւորեալ ժողովուրդ մը միայն կրնայ առաջին պատեհ առթիւ յագուրդ տալ իր վայրագ զգացումներուն:

Մեր ժամանակակից պատմութիւնը կը հաւաստէ թէ Գիւրտը երէկ չէ որ մարդասպան, յուղիակհար, աւազակ

դարձաւ: Եթէ նկատողութեան անոնք մեր Պատրիարքարանէն յիսուն տարիէ ի վեր հրապարակ ելած տեղեկագիրները միայն, կը տեսնենք թէ քրդական վատութեանց յիշատակարանը շատ հինկէկ թուական մը կը կրէ:

Մենք շատ կը ցաւինք երբ մեր գատին Երծպացի պաշտպանները Հայաստանի հիմակուան աղիտաւոր վիճակը վերագրեն պարզապէս սուլթանի մը տիրապետութեանը: Մեր բարեկամները այս սխալումովը մեծապէս կը փաստեն մեզի: Երբ Խորիմեան պատրիարք հայկական խնդրին հիմը դրաւ 1870ին, զեռ այն ատեն սուլթան Համիտ չի կար. երբ Ներսէս Պատրիարք 1878ին ՍանՍթեֆանօ և Պերլին դիմուեցեր ըրաւ, ան ատեն զեռ սուլթան Համիտ երկու տարուան գահակալ մըն էր, ու տակաւին իշխանութեան բացարձակ տէրը չէր եղած: Երոպական պետութիւնները երբ օսմանեան իշխանութենէն պահանջեցին Հայոց պատիւը, կեանքը, ինչքը պաշտպանել Քիւրտ եւ ուրիշ վայրաշ ցեղերու դէմ, արգեօք 1893 թուականը ունէին աչքերնուն առջեւ թէ 1878 էն առաջ գործուած ահռելի ոճրագործութեանց անհուն շարք մը:

Հայ ազգը քաջ գիտէ թէ սուլթանի մը անձին փոփոխութիւնը Հայաստանի վիճակին մէջ ո՛ր և է փոփոխութիւն չի կրնար առաջ բերել, վասն զի Հայաստանի կացութիւնը սուլթան Համիտէն շատ առաջ ահռելի եղած էր, վկայ՝ մեր 1870-78ի բողոքագրերը, պահանջագրերը: Հաւանական է, բայց ոչ ոտոյզ, որ ուրիշ սուլթանի մը օրով կոտորածներու թուականը գեթ առժամապէս փակուի, բայց սուլթան Րէշիտն ալ, սուլթան Քէմալէտտինն ալ, սուլթան Իշրէտտինն ալ պիտի շարունակեն Հայաստանը մութին մէջ մարթեր, լռութեան մէջ խեղդամահ սպաննել, ինչպէս ոճրագործեցին սուլթան Մէճիտ, սուլթան Ազիզ, սուլթան Համիտ: Մեր գատին յաղթանակը սուլթանի մը անձին փոփոխութեանը մէջ չկայանար, այլ Հայաստանի վարչական դրութեան փոփոխումին մէջ: Ինչպէս շատ անգամ յիշեցուցած ենք, և անշուշտ զեռ շատ անգամներ ալ յիշեցնելու հարկին մէջ պիտի գտնուինք, սուլթան Համիտ ինչքան ալ մեծ ոճրագործ մըն է բայց և այնպէս ինչ կրցաւ ընել պզտիկ Ղիբանանի մը, որ կը վայելէ նախանձելի բարեբաօտութիւն մը—«նախանձելի» գոնէ արեւելեան գաւառի մը համար: Ինչ ունի այդ երկիրը որուն սահմաններուն վրայ սուլթանին ամենագորութիւնը կը խորտակուի: Լիբանան այն առաւելութիւնը կը վայելէ որ ինչքան ալ օսմանեան հող մը, բայց եւ այնպէս Երոպայի մեծ պետութեանց աչքերը կը հսկեն անոր վրայ:

Քիւրտերը իբր հարստահարեալ ժողովուրդ մը ներկայացնելու ձգտումը շատ տարօրինակ երևոյթ մը կը թուի: Ասիական Թիւրքիոյ ամէն կողմը, ամէն տեղերը իրենց զօրավիգ ունենալով պետութեան զինուորական

զօրութիւնը, գատական իշխանութիւնը, վարչական ամբողջ պաշտօնէութիւնը, Քիւրտերը կ'այրեն մեր արտերը, կը թալանեն հայը գեղերը, իբրև ճորտ կը գործածեն հայերը, ուզածնուն պէս կը սպաննեն, կը կոտորեն հայերը, իբր թէ իրենց հաւերը ըլլային անոնք. այս քիւրտերն են հարստահարեալները: Թիւրքիոյ մանաւանդ արդի վարչութիւնը կառավարական մտատիպարը կը ներկայացնէ Քիւրտերուն համար. վասն զի «սահման քրդաց, վայրագութիւն իւրեանց»:

Հայ ազգին երեսին նետուած մեծ նախատինք մըն է երբ կը յայտարարուի Ապտիւրրահմանի մը կողմէն թէ Քիւրտերը իրենց հովանաւորութիւնը պէտք է տարածեն Հայոց վրայ: Չենք գիտէր թէ այդպիսի յայտարարութիւն մը ինչ ընդունելութիւն պիտի գտնէր մեզի յաջորդող սերունդէ մը, եթէ օրին մէկը Մուսա պէյի մը գաւազներն ու թոռները ուզէին իրենց հովանին տարածել Հայոց վրայ, պանծացնելով իրենց պապուն ու իրենց ցեղին դիցազներգական առաքինութիւնները: Մենք այժմ Պետրղանի մը սերունդին հանդէպ այդ միւնսյն կացութեան մէջ կը գտնուինք: Մենք հայերս պատմական անցեալով մը մեծահարուստ, իսկ ոյժմ Ասիական Թիւրքիոյ մէջ եւրոպական քաղաքակրթութեան էն հեղինակաւոր ներկայացուցիչները, մենք պէտք է որ այդ թափառաշրջիկներուն, որոնք վայրենութեան ներկայացուցիչներն են, հովանաւորութիւնը ու պաշտպանութիւնը մտրանք: Հայ ազգը արդար գատի մը կը հետամտի, եւ ինքն իր մէջ բարոյական ու նիւթական շատ կորով կը զգայ զեռ:



Գիտենք սակայն թէ Քիւրտերը նիւթական բիրտ ուժ մը կը ներկայացնեն, ուժ մը որ կրնայ, եւ պիտի կրնայ, Արեւելեան խնդրին մէջ կարգ մը ծրագրերնու յաջողման ծառայել: Անոնք որ կը նկրտին օսմանեան կայսրութեան քայքայումին, երկար ատենէ ի վեր իրենց ուշադրութիւնը դարձուցած են Քիւրտերուն վրայ: Անշուշտ այդ քայքայումէն նոր Պուլկարիաներ, նոր Սիւրպիաներ օտեղծել չեն ըրձար, այլ իրենց պետութեան սահմաններուն ընդարձակմանը կը ձգտին: Արիւնլուայ Հայաստանէ մը յետոյ առիւնտուշտ քիւրտերու շարժում մը մեծապէս պիտի նպաստէ այդ ծրագրին յաջողութեանը, ուստի շատ մը կասկածներ ունինք որ յանկարծ Երոպայի մէջ քրդական հարցի մը ծագումը կրնայ ձգտիլ այդ նպատակին. որոշ չենք կրնար գիտնալ թէ Օսման կամ Ապտիւրրահման ինչ նպատակի կը ծայայեն, սակայն Քիւրտիստանու մը մը հրատարակութեանէ ի վեր ուշադիր կը դիտենք որ Բրօ Քիւրտիստան «Քիւրտիոյ համար» յանկարծ համակիր շահագրգռման նշանները կը սկսին երեւան գալ:

Սուլթան Համիտ Քիւրտերու մէկ մասը կանոնաւորապէս զինելով կազմեց Համիտիէ հեծելազունը անու-

նով առաջին քրդական բանակը, որ իր կրած շքանունը արդարացնելու համար Հայաստանի պատուհանն է եղած: Այդ հեծելազունները նախ՝ հայերը զօգուած պահելու սահմանուած են, յետոյ՝ ի հարկին Ռուսիոյ գէտ պիտի շարժին: Համարիէնքը մինչև հիմակ իրենց քաջութիւնը անդէն հայերը կուտորելու մէջ ցոյց տուին, եւ չենք կրնար գիտնալ թէ կանոնաւոր բանակի մը առջեւ մինչև որ աստիճան պիտի կրնան քաջարի հանդիսանալ. բայց շատ հաւանական է որ թնդանօթներու բերանը երթալու չափ անխուհեմ պիտի չգտնուին: Սակայն թիւրքիոյ համար սպանական վտանգ կը ներկայացնեն, մանաւանդ երբ մեծ պետութիւն մը իրենց ետին կենայ:

Օսմաններէն, Ապտիւրրահմաններէն զգուշանալու շատ պատճառներ ունինք: Անոնց այս յանկարծածին հայասիրութեան գաղտնիքը իմանալու հետաքրքիր ենք: Երբ Տամատ Մահմետ փաշա իբր թիւրքիոյ բարենորոգումներու գատին վերամարտիկ մը Եւրոպա նետուեցաւ, ու որ մըն ալ կոտորածներուն առթիւ իր զայրոյթը յայտնեց ընդդէմ իր աներձագին, հարցուցինք թէ մեր էիք երբ Երլտղի պալատին մէջ Հայաստանի և Կ. Պոլսոյ կոտորածները կը կարգադրուէին. ինչո՞ւ մարգաօրական ձայներնիդ չլսուեցաւ 95-97ին: Միևնոյն հարցումը այսօր կ'ընենք Օսմանի, Ապտիւրրահմանի «մեր էիք մինչև հիմակ»:

Մահմետ փաշա երկաթուղիներու մենաշնորհի մը մէջ իր կաշառակերութիւնը յագեցնելու անկարող զրտնուելով ուզեց սուլթանը վախցնել, եւ հիմակ ձմեռը եզիպտական արևուն հեշտութիւնը կը վայելէ: Գիւրտ յանկարծածին վերանորոգիչները ի՞նչ դիւական ծրագիրներու յաջողութեանը սահմանուած են:

ՀԱՄԱԺՈՂՈՎ ՀԱՅՈՑ

Ուտարի Հայոց Եկեղեցիին մէջ ղեկտեմբեր 22ին Ազգային Ժողով մը գումարուեցաւ, անդամակցութեամբ երեսունևմէկ պատգամաւորի, եւ նախագահութեամբ Տ Արօէն Վ. Վեհունիի: Ամերիկայի Հնչակեան պատգամաւորական ժողովը յղացած էր այս գումարման գաղափարը, որ Նահանգային Վարչութեան ձեռքով գործադրուեցաւ: Կոչուակ և Չայն Հայրենեաց հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդեն այդ ժողովին գործառնութեանց մասին:

Ժողովը նախ և առաջ Դիւանին ընտրութիւնը կատարած է հետեւեալ կերպով.

- Ատենապետ, Պ. Մ. Նահիկեան
- Դեր-ատենապետ, Տր. Հ. Ծէլալեան
- Ատենապարտ, Պ. Ա. Կարապետեան
- Դեր-ատենապարտ, Տր. Գազանձեան

Յաջորդ օրը ժողովը երկու նիստ ըրաւ, առաջին և իրիկունը: Առաւօտեան նստին մէջ պատրաստեց իր օրակարգը, մասնախումբի մը միջոցաւ դասաւորելով պատգամաւորներուն բերած զանազան խնդիրները. միանգամայն յանձնախումբ մը ընտրեց օրուն պաշտօնը պիտի ըլլար Ամերիկեան մամուլին տեղեկագրել Համաժողովին կարևոր օրոշումները: Այդ Յանձնաժողովին անդամ ընտրուեց են Պ. Գ. Գալէմբեարեան, Տր. Ծէլալեան, Պ. Կ. Փափագեան:

Երեկոյեան նստին մէջ ժողովը օրակարգին իւրաքանչիւր խնդրին վրայ երկար խորհրդածութիւններ եւ վիճաբանութիւններ կատարելէ յետոյ, իր օրոշումները հետեւեալ բանաձեւով ամփոփած է.

«Նկատելով որ Ուտար գումարուած Համաժողովը իր կազմութեամբը լիովին չներկայացնէր Ամերիկայի բոլոր Հայ գաղթականութիւնը, և այլի առջեւ ունենալով թէ կեցողուն ական Ազգային Մարմնի մը գոյութիւնը անհրաժեշտ է Ամերիկայի Հայոց մէջ, միևնոյն ատեն տեսնելով որ ժողովը ինքզինքը անձեռնհաս կը գտնէ այնպիսի մարմնի մը ընտրութեան, կ'որոշէ առժամայն յանձնախումբ մը ընտրել, որ պաշտօն ունենայ մինչև որոշ ժամանակ մը աշխատի Հայ գաղթականութեան մէջ այդպիսի կեցողունական Մարմնի մը գոյութիւնը ապահովելու»:

Գաղտնի քուարկութեամբ յանձնախումբին անդամ ընտրուած են.

- Յովսէփ Եպիփոպոս Սարաճեան
- Պատ. Հ. Ալէն
- Տր. Հ. Ծէլալեան
- Տր. Մ. Ս. Գարրիէլեան
- Պ. Կ. Գալէմբեարեան
- Պ. Կ. Գարակիւլեան
- Պ. Կ. Փափագեան
- Տր. Ա. Շահպոյզեան
- Պ. Պ. Գոյումճեան

Այս Յանձնախումբին պաշտօնն է Համաժողովին կողմէն որոշ սահմաններու մէջ գծուած խնդիրներուն գործնականացմանը աշխատիլ:

Յանձնախումբը պիտի աշխատի նաև Ա. Որբախնամ և այլ բարինպատակ ընկերութեանց միացման ե ընդհանրացման գործը փութացնել, թղթակցութեանց կամ այցելութեանց միջոցաւ:

Բ. Հայկական պատուին և ազգային դատին ի պաշտպանութիւն յանուն Համաժողովին հրատարակութիւններ ընել, երբ հարկը ներկայանայ:

Գ. Ամերիկայի Հայ գաղթականութեան թուահամարը ստուգել:

Դ. Արտասահմանի Հայութեան հետ յարաբերութիւն մշակել, նմանօրինակ Համաժողովներու գումարման թելադրութեամբ:

Ե. Գումարելի յաջորդ Համաժողովին վաւերացմանը ներկայացնել ընդհանուր կանոնադիր մը, իբր հիմ ազգային ապագայ գործունէութեան:

Զ. Նիւ-Իորք եւ Մարսէլլ ներկայացուցիչներ կարգել ի դիրութիւն հայ ճամբորդներու:

Ժողովը զեկտեմբեր 24ին գոնփսի ըրած է իր նիստերը, եւ որոշեր է չհրատարակել խնդրի առարկայ եղող նիւթերը:

Ամերիկայի Հնչակեան Նաւանգային վարչութիւնը այս Համաժողովին երկու պատգամաւոր ղրկած է, Պ. Ս. Յովսէփեան, եւ Պ. Կ. Մինասեան:


Ներկայ դանուած են նաև Կոչնակի և Չայն Հայրենեացի խմբագրութեանց ներկայացուցիչները:

Համաժողովը որոշեր է նաև յիշատակադիր մը ուղղել Եւրոպայի մեծ պետութեանց և Միացեալ Նահանգներու նախագահին, ինչպէս նաև համակրական ուղերձ մը Բրո Արմէնիաի խմբագրութեան:

Համաժողովին նիստերը շատ կանոնաւոր եղած են, ըստ վկայութեան Ամերիկայի հայ մամուլին: Կոչնակ կ'ըսէ. «Ժողովներու մէջ տիրող կարգապահութիւնը զընահատելի էր: Իրագործում կը մաղթենք Համաժողովի մէջ արտայայտուող բոլոր ազնիւ զգացմանց ու գաղափարաց:»

Չայն Հայրենեաց կ'ըսէ. «Ըստ պատուիրակներու միաձայն վկայութեան, ժողովը յուսացուածէն շատ աւելի յաջող և արդիւնաւոր եղաւ. յիշատակութեան արժանի է ժողովին մէջ տիրող օրինակելի կարգապահութիւնը, եւ այն համերաշխութեան ոգին որ զանազան քաղաքներէ եկող պատուիրակներու մէջ զգացումի եւ գաղափարի միօրինակութիւն մը կը շեշտէր: Ամէն կողմէ եկած հայերը զարմանալի նմանութեամբ մը կուգային հաստատել թէ Ամերիկայի Հայութիւնը անտարբեր չէ հայրենիքի ցաւերուն:

Նոր կեանքի յաջորդ թուովը կը խօսինք այս Համաժողովի մասին:



ԹԻՒՐԵՒՅԻՈՅ ԶՈՐՍ ԿՈՂՍԸ


Թիւրքիա հիմակ ալ «Հրէական Խնդիր մը» իր դէմը տեսնելու կասկածները ունի: Հակահրէական կարգ մը տնօրինութիւնները որոնք սուլթանին հրամանաւր Պա-

ղեօտինի մէջ պիտի գործադրուին, կրնան Երլտզի վախերը յայտնող նշաններ համարուիլ: Թէ վաճառականութեան, թէ ուխտի համար Պաղեստին մտնող Հրեաներուն արգիլուեցաւ երեք ամսէն աւելի հոն մնալ: Հրեաները կը զրկուին նաև իրենց մայր հայրենիքին մէջ հօլ զընելու իրաւունքէն: Այս խիստ տնօրինութեանց շարժառիթն է Ռուսիայէն եւ Բաւարիայէն բազմաթիւ հրէից զէպի Պաղեստին խուժումը: Կ. Պոլսոյ լաւատեղեակ շրջանակներու մէջ կը յայտարարուի թէ «Միտնական» մարմին գործունէութիւնը շատ զէջ աչքով կը տեսնուին Երլտզէն: Այդ կազմակերպեալ մարմինը որ պարբերաբար ընդհանուր ժողովներ կը գումարէ Եւրոպայի զանազան մայրաքաղաքները, ինչպէս այս տարի ալ Լոնտոն գումարեց, նպատակ ունի Հրեաները Պաղեստին համախմբել: Տարակոյս չի կայ թէ այդ համախմբումէն յետոյ Սողոմոնի տաճարին վերակառուցումը և Դաւիթի թագաւորութեան վերահաստատութիւնը ժամանակի խնդիր կրնայ ըլլալ միայն: Այն մեծ հարստութեամբ զոր հրեաները իրենց տրամադրութեան ներքև ունին, շատ զժուար պիտի չըլլայ անկախ Հրէաստանի մը գաղափարին իրականացումը:

Թիւրքիոյ ինչպէս ամէն խնդիրները նոյն եւ հրէականն ալ միջազգային կարեւորութիւն ունի: Եւրոպայի ընդդիմամարտ շահերը Պաղեստին ալ բաց ասպարէզ կը զըտնեն: Գերման Հրեաներու գաղութները, որոնք հետը հետէ Պաղեստինը գրաւելու վրայ են, մեծապէս պիտի նպաստեն փոքր-Ասիոյ վրայ Վիլհելմ կայսեր ծրագիրներուն յաջողութեանը, յաջողութիւն մը որուն երբեք չի հաւանիր Ռուսիա:

Նովոյե Վրէմիա, Բեդրպուրկի ազգեցիկ թերթը, որ շատ անգամ կառավարութեան գաղափարները հրապարակ կը նետէ, սկսած է սպառնալիքներ տեղալ Թիւրքիոյ: Ռուս ազգայնամուլ թերթը Երլտզին կ'ազդարարէ թէ Թիւրքիոյ շատ սուղի կրնայ նստիլ այն բարեացակամութիւնը որով Երլտզը ուրիշներուն կը դիւրացնէ փոքր-Ասիոյ մէջ ռուսական շահերուն հակառակող քաղաքականութեան մը հզօրացումը:

Այս սպառնալիքին գործնականապէս ուժ կուտայ ռուս կառավարութիւնը, Դոնէն յանկարծ պահանջելով պատեւտեւրազմական տուգանքին վճարումներէն ապառիկները: Թայմը կը կարծէ թէ Ռուսիա անգամ մը եւս Թիւրքիան նեղը կը զնէ, սուլթանին տարապայման զերմանասօրութեանը զէմ արգելք յարուցանելու խորհրդով:



Թիւրքիոյ վիճակը սակայն Մակեդոնիոյ կողմէն շատ կը ծանրանայ: Բազմաթիւ Պուլկար յեղափոխականներ Մակեդոնիոյ մէջ ընդհարումներ կուսնան Թիւրք զինուորներուն հետ: Վիեննայէն Թայմը կը հեռաորդի

Թէ Եւրոպայի մայրաքաղաքներուն մէջ տիրող կարծիքն այն է թէ առ առաւելն մինչև տարի մը Մակեդոնական յեղափոխութիւնը կը պայթի, ընդ հովանաւորութեամբ Պուլկարիոյ: Մակեդոնական քօմիթէներուն գործունէութիւնը արդիւնելու ո՛ր է միջոց չի կայ այլ եւս: Իրաւ է որ Ռուսիա եւ Աւստրիա մէջներին համաձայնութիւն մը գոյացօցած են Պալքանեան խնդիրներու մասին, բայց Մակեդոնիայով չեն զբաղած: Ու Պալքանեան պետութիւնները, որոնց հետ և Յունաստան, կազմ և պատրաստ են մեծ պատահարին համար:

Թաւն նոր տարուան աթիւ խմբագրական յօդուածի մը մէջ Թիւրքիոյ վիճակը շատ տագնապալից կը նկատէ:

Կրեաթի խնդիրը կը վերաբացուի, խնքնավար կղզին Յունաստանի միացնելու խորհրդով: Պատիկ Սամուր որ հանդարտիկ կ'ապրէր իր առտնին սահմանադրութեամբը, հիմակ անկարգութեանց վայր մը զարձած է, ելլալով մահաբեր ազդեցութեամբը: Թիւրքիոյ ամէն տեղերէն ազատականները արդէն Եւրոպա խոնուած էին, ու ահա սուլթանին մտերիմներն ալ փախչող փախչողի: Մակեդոնիան սպառնական է, և Հայաստանի կացութիւնը ահեղապէս ծանր: Եւրոպա որ Թայրագոյն-Արեւելքով զբաղած է չի կրնար այլ ևս երկար ատեն մոռնալ մօտաւոր Արեւելքի խնդիրը, կ'եզրակացնէ Բարիզի թերթը:

Այսպէս ահա Թիւրքիան տագնապալից վիճակի մը մէջ տեսնելով կը մտնենք նոր տարին, որուն վախճանը երբ հասնի, անշուշտ օսմանեան կայսրութեան արդի կացութիւնը շատ աւելի ծանրացած պիտի գտնենք: Մակայն միևնոյն ատեն աւելի մօտեցած պիտի ըլլանք այն ժամուն ուր Թիւրքիոյ ժողովուրդները իրենց հանգստութիւնը պիտի գտնեն:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ անեղասպիս ծանրացած է, ինչպէս կը հետազոտուի էշրոպական մամուլին: Ռիւսքերի գործակալութիւնը Պարսկէ հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդէ անգլիական թերթերուն:

«Կառավարութիւնը ձերբակալեց Մոշի եւ Բաղէշի առաջնորդները: Աստեք ամրաստանեցան իրր գրգռիչներ Սպաղանքի կոտորածին մասնակցող Խալիզ Պեշիբի և Երթորդիի սպաննորդները: Օրմանեան պատրիարք Պալատը եւ Իտար խատիս բոչոքչեյով, Մոշի առաջնորդը ազատ ձգտեցաւ, իսկ Բաղէշիին ոստիկանական հսկողութեամբ Պոլիս կը բերուի: Պատրիարքը վերստին բողոքեց առաջնորդի մը նկատմամբ այսպիսի վարմունքի

մը համար,

«Երկրին ներսերէն եկած շարքերը շատ գեշ են: Տասնորդները եւ զինուորական տոարքի մնացորդները հաւաքելու համար ամենախիստ միջոցներ ի գործ կը դրուին: Գեղացիները կը բռնադատուին իրենց պարտքին և վերջին բարան իսկ հատուցանելու: Հակառակ սուրբանին հրամաններուն, բնաւ տոարքի զեղչում չեղաւ այն գեղերը որոնք կոտորածներու ատեն կորուստներ ունեցած են, կամ՝ որոնց բնակիչները ձգեր գաղթեր են: Հետեւաբար բշտատարիները ծայրայեղ է:»

Վիեննայէն դեկտեմբեր 28 բռնակառնով «Տէյլի Բրուքսիլ»-ի կը հետազոտուի թէ Էրզրումի, Վանի, Պիքլիսի խտովեալ վիճակը այնքան ծանրացած է որ բարեկարգութիւնը վերահաստատելու համար այդ կողմերը շատ զօրք դրկելու հարկ տեսնուած է:

ՆՈՐ ԹԵՐԹ ՄԸ. Ստացանք «Կոչնակ»-ի առաջին երեք թիւերը: Նոր շարքարքերը կը հրատարակուի Պոսթոն, նպատակ ունենալով Ամերիկայի հայ գաղթականութեան իմացական եւ բարոյական պետքերուն ծառայել: Բացի հայ գրողներէ պիտի աշխատակցին նաեւ Միս Պաքլիզ եւ Ամերիկացի ու Անգլիացի ռարիշ գրողներ: «Կոչնակ» «Վարագայ Ս. Խաչ»-ի պատկերը դրոշմած կը կրէ իր ձախտը: Յոշանք թէ նոր թերթը լրջամիտ, պտրկեղտ և պատուաձանալ ռազդարեամբ պիտի նկատուի: Ամերիկայի Հայոց գարգացման ու բարոյացմանը:

ՆՈՐ ԿԵԱՆՔ
ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՆՈՐ ԿԵԱՆՔԸ պիտի շարունակէ հրատարակուի 1901 Յունուար 1էն, նոյն ծրագրով և նոյն պայմաններով:

Մեր բաժանորդներէն կը խնդրենք անյապաղ ծանուցանել մեզ իրենց բաժանորդագրութեան վերանորոգումը:

ՀԱՍՏԵՆԻ ԲԱԺՆԵՂԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԸ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին եւ 15ին: Բաժնեզինն է Եւրոպայի համար տարեկան 10 եւ Վիցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 տուար:

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ աւ բաժնեզին զրկել ա՛

L. FRANK,
27, CHESTERTON ROAD,
(ENGLAND) LONDON, W/